

ՄԻԷՏԱԲԵՐ

Ե. ՏԱՐԻ

ՀԱՆԷՊ, չԵ ՅՈՒԼԻՍ, 1932

ԹԻԻ 11-12

ՏՐ. ՖՐԷՆՍԻՍ Ի.
ԳԼԱՐԲ
1851-1927
ՆԻ ՏԻԿ. ԳԼԱՐԲ



Հիմնադիր Ե. Գ.
Ջանից ԸՆԿԵՐԱԿ-
ցութեան եւ Ջա-
նիցի Համալսար-
նային Միութեան
Նախագահը մին-
չեւ իր մահը:

ԶԱՆԻՅԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

1. Անձնական նուիրում Յիսուս Բրիստոսի եւ վկայում Անոր անուան:
2. Յիսուս Բրիստոսի հետ յարաբերութիւն՝ ուխտին մեջ արտայայտուած ոգիով:
3. Կրօնական ծառայութեան վարժուիլ յանձնախումբերու մեջ գործելով:
4. Հաւատարմութիւն տեղական եկեղեցիին եւ յարանուանութեան:
5. Միջարանուանական միաբանութիւն մը որ պիտի յայտնուի համաժողովներու, խորհուրդներու եւ Բրիստոսի համար միացեալ գործունեութեան մեջ:
6. Մշակում բարեպաշտ կեանքի՝ Սբ. Գիրքի սերտազուրեամբ. աղօթքով եւ խորհրդածութեամբ:
7. Առասաձեռն կերպով տալ բրիստոնեական գործի համար:
8. Բրիստոնեական լաւ քաղաքացիութիւն, մասնակցութիւն մեր համայնքին կեանքը բարելաւող գործունեութեանց, նաեւ օգնել Աստուծոյ Թագաւորութեան հաստատելուն:
9. Միջազգային միաբանութիւն եւ խաղաղութիւն ու երկրիս բոլոր ազգերուն մեջ հանութիւն:

Յ. Ի. Գլարբ



ՈՒԽՏ ԳՈՐԾՈՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԵԱՆ

Ապաւինելով Յիսուս Քս.ի փրկարար ոյժին կը խոստանամ.—

1. Հետեւիլ իՐՆՆ:
2. Աստուծոյ հետ յարաբերութիւնս վառ պահել՝ ամէն օր աղօթելով եւ Ս. Գիրք կարդալով:
3. Զանալ ընկերակցութեանս եւ եկեղեցիս հանդէպ ունեցած բոլոր պարտականութիւններս հաւատարմօրէն կատարել:
4. Իմ օրջանակիս մէջ Աստուծոյ Հայրութեան հաւատք՝ եւ մարդկային եղբայրութեան ոգին ապրիլ եւ տարածել:

ՈՒԽՏ ՕՅԱՆԴԱԿ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԵԱՆ

Կը խոստանամ.—

1. Կանոնաւորաբար հետեւիլ ընկերակցութեանս բոլոր ժողովներուն եւ անոր նպատակին իրազօրժման համար ընել ինչ որ կրնամ եւ ինչ որ կ'ակնկալուի ինձմէ:
2. Բոլոր կեանքիս մէջ ոգելից ըմպելի չգործածել եւ չծխել:

Տարբեր երկրէ, ազգէ, ցեղէ, լեզուէ եւ գոյնէ աւելի քան 4.500,000 երիտասարդներ ստորագրած են այս ուխտը ու կ'աշխատեն նշմարիտ եւ եռանդուն փրստոնեական կեանք մը ապրիլ: Այս մեծագոյն բանակն է որ կ'աշխատի աշխարհս Յիսուսի համար շահիլ իրենց կեանքի օրինակով: Անոնք կը յառաջացնեն համամարդկային սէր եւ եղբայրակցութիւն: Զե՛ս ուզեր միանալ այս շարժումին:

ԱՂՕԹԷ՛

1. Որ այս ուխտը ստորագրող ամէն երիտասարդ հաւատարիմ մնայ անոր:
2. Որ այս ընկերակցութեան մէջ եղող ամէն ոյժ Անոր փառքին համար գործածուի:
3. Որ Տէրը այցելէ ամէն օր աւելի նիւթապաշտ եւ հաճոյապաշտ դարձող մեր երիտասարդութիւնը, արթնցնէ փնացող եւ անտարբեր եղողները:

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Ե. ՏՈՐԻ

ՀԱՆՐԱՊ, շԵ ՅՈՒԼԻՍ, 1932

ԹԻԻ 11-12

ՏՐ. ՏԷՆԻԸԼ ՓՈԼԻՆԿԻ ՆԱՄԱԿԸ

Պոստոն, 10 Մայիս 1932:

Սուրբոյ Բոլոր Զանիցներուն,

Վերջերս Պր. Արամ Հասիսեանի ստացայ նամակ մը Զեր վրայով որ մեծապէս հրճուեցուց զիս: Զափազանց ուրախ եմ գիտնալ Զեր յարատեւ յառաջդիմութեան վերայով. պիտի աղօթեմ որ երկնային Հօր օրհնութիւնը Զեր վրայ ըլլայ, ու օր ըստ օրէ աւելի յառաջդիմութիւն ձեռն բերեմ Զեր գործունէութեանց մէջ՝ ծառայելով Քրիստոսի եւ Նկեղեցւոյ:

Շատ պիտի փափաքեի Զեզ երես առ երես տեսնել մօտ աղագային, սակայն նկատելով որ այդ անկարելի է, այս երկնողովս կուգամ յայտնել Զեզ իմ զգացումներս, վկայելով որ համաութարհային այս անցանելի տագնապի ընթացին, Նրիսասարդաց Քրիստոնէական Զանից Ընկերակցութիւնը յարատեւ, օգտակար եւ բեղուն ծառայութիւն մը կը մատուցանէ ամէն տեղ:

Սիրալիր Ողջոյններով


ՏԷՆԻԸԼ Ա. ՓՈԼԻՆԿ.

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ԿՈՉԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՈՒ

Գրեց՝ ՎԵՐ. ՏԷՆԻԸԼ ՓՈԼԻՆԿ

Անցեալ յիսուն տարիներու ընթացքին Զանիցը եղած է գործօն եւ կենսունակ ոյժ մը, միշտ ղէպի վեր բարձրացող մակնթացութիւն մը, յառաջ բերելով միջյարտնուանական համագործակցութիւն եւ քրիստոնէական միութիւն:

Զանիցը իր համաժողովներովը, հասարակ գործերու տուած կարեւորութեամբը, ղէպի նշանաբան ընտրած եկեղեցիին հաւարմութեամբը, բարցրացուցած է Քրիստոսը, միացուցած է իր հետեւորդներուն սիրտերը Քրիստոնէական սիրոյ անքակտելի կապերով եւ զիւրացուցած է բոլոր հաւատացեալներու միութիւնը: Այն փորձաքարը որով



ՎԵՐ. Տ. ՓՈԼԻՆԿ, D.D., LL. D.

Նիւ Եորքի Marble Collegiate եկեղեցւոյն հովիւը, Միջազգային Զանիցներու նախագահ, Նիւ-Եորքի եկեղեցիներու Միութեան նախագահ, CHRISTIAN HERALD քերթին խմբագիրը:

Քրիստոս կ'ազդէ փորձել իր աշակերտները, կը գտնուի Յովհ. 13.35 համարին մէջ. «Ասով ամէնը պիտի գիտնան թէ իմ աշակերտներս էք, եթէ իրարու վրայ սէր ունենաք»: Քրիստոս Յիսուսի հանդէպ մեր ունեցած հաւատարմութիւնը, յայտնի պիտի ըլլայ ոչ թէ այն բաներով զոր մենք կը խօսինք, կամ այն գործերով զոր մենք կը կատարենք, այլ միակ զմեկ սիրելով:

Աստուած տէր է. Միակ Աստուածն է. Անով մէկ ենք. Աշխարհի Քրիստոնէացու մը կ'սպասէ ոչ զրամի, ոչ երիտասարդներու զոհողութեան եւ միւ-

(Շար. հջ 238)

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՄԵՆՔ ԻՆՉ ԿՐԱԿՆԿԱԼԵՆՔ ԶԱՆԻՅԷՆ

Յետպատերազմեան մեր եկեղեցական կեանքին մէջ աւելագոյն և յուսա-
տաւ երեւոյթներէն մէկն ալ Զանից
ընկերակցութիւններու վերակազմու-
թիւնն է մեր կարգ մը եկեղեցիներուն
մէջ։ Անոնց հինգ վեց տարուան
կեանքը տեւական վերելքի գիծ մը չի
շինեւր անշուշտ։ Բայց այս՝ արգելք մը
չէ հոս գոհունակութեամբ արձանագրե-
լու անոնց կատարած օգտակար ծառա-
յութիւնը։ Այս կազմակերպութեան
անցեալ և ներկայ վիճակը ներկայա-
ցնել չէ մեր նպատակը, այլ կ'ուզենք
շահաքրքրողներու ուշադրութեան
յանձնել կէտ մը միայն, եկեղեցիի և
Զանից ընկերակցութեան յարաբերու-
թեան մասին։

Ուրախութեամբ գիտելի է որ Զա-
նիցի հոգեւոր հանգամանքը աւելի սկը-
սած է շեշտուիլ։ Այս կէտն է միայն
որ պիտի որոշէ անոր գոյութեան տեւա-
կանութիւնը և իր նպատակին համե-
մատ օգտակար ծառայութիւնը։ Զա-
նիցը՝ թատերական ներկայացումներ,
համերգներ, նուագահանդէսներ, տո-
նավաճառներ և այլնի նման հանդէսներ
սարքող կազմակերպութիւն մը չէ։ Ա-
նոր նպատակն է տ'չ նիւթական հասոյթ
մ'ապահովել և ո'չ ալ ժողովուրդին հա-
ճելի ժամանցներ պատրաստել։ Ասի-
կա շեղում մըն է, որուն ազդեցութիւնը
ընկերակցութեան վրայ մահացու կրնայ
ըլլալ։ Այսպիսի հաւաքոյթներ անհրա-
ժեշտ են մեր ժողովուրդներուն և մա-
նաւանդ երիտասարդութեան համար։
Բայց ասիկա Զանից ընկերակցութեան
գործը չէ։ Այն երիտասարդները որոնք
ոչ—հոգեւոր, թէպէտ մաքուր և քաջա-
լերելի, շարժառիթներով Զանիցի կ'ան-

դամագրուին, զայն նկատելով ընդհա-
նուր երիտասարդական կազմակերպու-
թիւն մը, անպատճառ դժուարութիւն-
ներու պիտի մատնեն և ուրիշներն
ալ պիտի մատնեն։ Այսպիսիներու
գործունէութեան ասպարէզ տալու հա-
մար պէտք է նպատակին յարմար մի-
ջոցներ ստեղծել, և արդեօք կարելի չէ՞
զուտ մշակութային մարմին մը յառաջ
բերել, ժողովուրդին կամ մանաւանդ
երիտասարդութեան գեղարուեստական,
ընկերային և իմացական պահանջնե-
րուն գոհացում տալու համար։ Այս
կերպով կարելի պիտի ըլլայ եկեղեցիին
ամէն դասակարգէ երիտասարդները ե-
կեղեցիին ազդեցութեան տակ պահել,
անոնց սիրտը եկեղեցիին կապել, և
մանաւանդ Զանից ընկերակցութիւնը
աւելորդ բռնէն ազատ պահել, և անոր
առիթ տալ, որ իր բոլոր օյժը զուտ հո-
գեւոր գործին յատկացնէ։

Զանիցի անդամները պիտի փնտռեն
հոգեւոր լոյսէ վուրկ անհատները, ե-
կեղեցիի չյաճախողները, մեղաւորները,
պիտի աղօթեն անոնց համար և անոնց
հետ, պիտի աղօթեն եկեղեցիի պաշ-
տօնէութեան և հովիւին համար, պիտի
հետաքրքրուին աւետարանչական գոր-
ծերով, եկեղեցիի հոգեւոր հաւաքոյթ-
ներուն պիտի մասնակցին հոգեւոր
շունչ և եռանդ զնելով հոն, եկեղեցիի-
ն ընդհանուր մթնոլորտը պիտի հոգե-
ւորականացնեն այլեւայլ միջոցներով
ամէն տեղ թափելով իրենց երիտասար-
դական աւելնը և քրիստոնէական շը-
նորհները։ Ահա այս է ինչ որ եկեղեցիին
կ'ակնկալէ Զանից ընկերակցութիւնն։

ԱՆՈՐ ՎՍՏԱՀԷ

Գրեց՝ ՎԵՐ. Յ. ՇՆՈՐՀՕՔԵԱՆ

Պաղեստինի մէկ մասը անկիւնը, արհամարհուած ազգէ մը, աննշան գիւղի մը և աղքատ ընտանիքի մը մէջ աշխարհ եկաւ Ան, իր հօրմէն աւ մօրմէն զատուած չլուսնեցաւ, շինականի փոքրիկ ու ցած խրճիթի երգիքին տակ ապրեցաւ, բազմաշահ ընտանիքի մը հոգը կրեց ուսերուն վրայ, խեղճութեան և չքաւորութեան բովէն անցաւ, մարդոց թշնամութիւններուն նիթարկուեցաւ, գնահատութեան փոխարէն ապերախութիւն գտաւ, ամէն կերպ փորձութիւններու ենթարկուեցաւ: Գուցէ ոչ մէկ երիտասարդ այնքան զըժուարութիւն և արգելքներ գտած է իր ճամբուն վրայ որչափ Ան: Բայց նա ոչ մէկ անգամ վհատեցաւ կամ ծուռ ու մուռ ճամբաներ փորձեց, ոչ մէկ անգամ մեղք գործեց:

Ճշմարիտ հերոսի մը կեանքն է Անոր կեանքը, ճշմարտութիւնը ապրեցաւ ու պաշտպանեց ամէն դնով, գրեթէ բոլոր ազգը հակառակեցաւ իրեն, բայց նա դժուարութեան առջեւ չընկրկեցաւ, իր ընթացքը չփոխեց, իր նըշանակէտէն չչեղեցաւ և իր սկզբունքներուն չդաւաճանեց: Ահաւասիկ թէ ինչո՞ւ համար Ան փոքրիկ ծիլի մը պէս բուսաւ և սակայն այսօր եօթը հարիւր միլիոն մարդոց պաշտելին եղաւ: Քաղաքակիրթ աշխարհի քաղաքական, ընկերային, գրական և գեղարուեստական կեանքին ընթացք տուաւ: Իրեն հետ չփախ տենեցող իւրաքանչիւր անհատը բարձրացուց, անոնց կեանքին նոր ուղղութիւն մը տուաւ, անոնց բեւեռային առողջ եղաւ: Պօղոսէն մինչեւ Կանտի շատ մը մարդիկ Անկէ ներշնչուի և զօրութիւն ստացած են: Դուն ալ վստահ է և հետեւէ Անոր:

Ձեռներեցութեան մարմնացումը եղաւ Ան: Խարդկային կեանքը նոր սկզբունքներու վրայ հիմնելու ձեռնարկեց: Անոր կեանքի սկզբունքները, — համբերութիւն, արդարութիւն, ծառայութիւն, «էր—յաւիտենական են և առողջ, և անոնց վերջնական յաջողութիւնը ամէն կասկածէ վեր է: Անոնք դարերէ ի վեր չհինցան: Թոշածոյ և Կանտի քաղաքականութեան մէջ, Հէնրի Ֆորտ ճարտարարուեստի մէջ, Պօղոս աւետարանչութեան մէջ փորձեցին զանոնք և յաջողեցան: Դո՛ւն ալ փորձէ եւ պիտի յաջողիս:

Աւելին կայ: Յիսուս Քրիստոս լոկ պատմական անձնաւորութիւն մը չէ, այլ այսօր ապրող մեզի շատ մօտ եղող էակ մըն է. ո՛չ սխալեցայ, մեր մէջը մեր էութեան մէկ մասը եղող Աստուածային հոգին է Այն: Ուստի խօսէ Անոր քանդի նա կը լսէ ու կը պատասխանէ, խնդրէ՛ Անկէ ու կը շնորհէ քեզի, աղօթէ՛ ու կեանք կը շնորհէ քու տկար հոգւոյդ: Ինչպէս որ Արեգակ մը միակ աղբւրն է լոյսի և ջերմութեան՝ նոյնպէս հիմայ ապրող այս Յիսուսը ակն ու աղբւրն է բոլոր առաքինութեանց և բարձրագոյն կեանքի: Կուզե՞ս ապրիլ բարձր և օգտակար կեանք մը, վստահէ՛ Անոր:

Ընթերցող, կարելի է գէշ սովորութիւններունիս, սրտնց դերին ես կամ մեղսալից կեանքի տանջանքներուն ենթակայ. կարելի է բարին գործադրելու և ապրելու փափաքունիս բայց կամքդ տկար է եւ անկարող, կարելի է դժգոհ ես ներկայ կեանքէդ և մաքուր աւագնիկ կեանք մը ապրիլ կ'ուզես, բայց անզօր ես: Դիմէ՛ Անոր, ապրող Յիսուսին, եւ վստահ եղիր որ Ան քեզ կ'ա-

ԿԵԱՆՔԻՍ ՆՈՐ

ՈՒՂԻՆ

Հագիւ հասուն պատանի
Կ'ուզեմ գիտնալ, արդեօք կա՞յ
Մի նոր նամբայ, նոր ուղի,
Կեանքիս համար ապագայ:


* *

Շատ փնտեցի ու գրեայ
Կեանքի միակ վեհ նամբան,
Որ կը տանի հեռակայ
Անհունին ու բարձրութեան:

Հոգի մը կայ, ես որով
Գրեայ աղբիւրն սիրոյ թանկ.
— Եկուր, ըսաւ ժպտելով,
Քեզ սորվեցնեմ ի՞նչ է կեանք:

Ես ուխտեցի հետեւիլ
Այս աննման ուսուցչին.
Սիրե՛լ, յուսա՛լ ու զոհուիլ,
Այս է կեանքիս Նոր Ուղին:

Յ. ՄՍՐԼԵԱՆ



ՈՐԽՏՍ

Ապաւինած Յիսուսի
Սուրբ զօրութեան փրկարար,
Կը խոստանամ թէ պիտի
Իրեն ըլլամ անդադար

Հաւատարիմ հետեւորդ:

Աստուծոյս հետ ապրելու,
Ձերմ սիրով մը կապուելու,
Կ'ուխտեմ արդ եւ ամէն օր,
Հանդարտ սրտով, մենաւոր,

Սուրբ Գիրք կարդալ, աղօթել:

Պիտի ջանամ սիրով վառ,
Ձգասութեամբ, ճիգով յար,
Ըլլալ, ապրիլ, համայնքին,
Ընկերութեանս ալ փառքին,

Ուխտաւոր մը, ծառայող:

Կը խոստանամ թէ ոգին
Եղբայրութեան մարդկային,
Ու հաւատքը հայրութեան
Սէր Աստուծոյ, յաւիտեան

Պիտի անխախտ ես պահեմ:

ՍԱՐԳԻՍ ԳԱԼՅԱՆ

զատէ, քեզ կը զօրացնէ: Զօրութեան
համար Անոր վստահելով նետէ առաջին
քայլդ, եւ պիտի տեսնես որ Նա պիտի
բռնէ քեզ, պիտի զօրացնէ քեզ, յաղ-
թութիւն պիտի շնորհէ քեզի, քու վըս-
տահութիւնդ ի դերեւ չպիտի ելլէ:
Վստահէ՛ Անոր:

ՅԻՍՈՒՍԻՆ ՆԱՅԷ

Մը. Մուսի կը պատմէ թէ՛ իր մանկու-
քեան օրերուն անգամ մը իր շուկին հետ
մեցումի ելած եւ պարտուած եր տեսնելով

որ ան միշտ իր առջեւէն կերբար: Ասոր
վրայ յուսահատ՝ ետ դարձած եւ նոյն պա-
հուն մեծ զարմանքով նշմարած եր շուկին
աներեւութեամբ: Ասին ակնարկ մը նե-
տելով տեսած եր շուկին իր ետեւը մնացած
ըլլալը:

Մեր կեանքերը խաւարեցնող եւ մոտոյ
ետին շուկին զերծ մնալու համար մեր երե-
սք միշտ Յիսուս Քրիստոսի դարձնելու ենք:

Մարդուն ամենամեծ
թշնամին իր եՍՈՆ է:

ԿԸ ԿԱՐԴԵՍ ԴՈՒՆ ԳԻՐՔԵՐՈՒՆ ԳԻՐՔԸ

Գրեց՝ ՎԵՐ. Ե. ԲԱՍՈՒՆԻ

Հին Պարսիկները սրբազան մատեան մ'աւնէին, զոր կ'անուանէին Աւեստա — այսինքն հաւաստի կամ շահեղի (գիրք), որովհետեւ կը հաւատային թէ անոր համեմատ ապրելով յաջող կեանք մը պիտի ունենան թէ՛ յաստիս եւ թէ՛ հանդերձեալին մէջ։ Անոնք աւնէին Զէնդ մըն ալ, որ կարգ մը իրանագէտներու կարծիքով աղօթք կը նշանակէ. այսպէս «Աւեստա Զէնդ» կամ Զէնդ աւեստա — այսինքն «Աղօթք ու վստահելի Օրէնք» կը խորհէին թէ ապահովութիւն կուտար իրենց՝ կեանքի ամէն փորձանքի դէմ։

Մենք ալ աւնինք մատեան մը, զոր կ'աւանդենք պէս հայկապ միաք մը, ԺԹ. դարու ամենամեծ պետական մարդացմէ մին, կ'անուանէր «Անյաղթելի Վէմը»։ Արդարեւ յաւիտենական ժայռըն է ան, ու ապահով ապաստանարանը մարդուն։ Այդ Պարսից Զէնդաւեստայէն յանդուես առաւել վստահելի է, եթէ այդպէս չըլլար, մեր երանաշնորհ հայրապետները — Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ, այնչափ տարիներ աշխատանք չի պիտի գտնէին զայն թարգմանելու եւ ժողովուրդին ձեռքը տալու։ Այդ անգին գիւտը պահպանելու նպատակաւ չէ՞ր դարձեալ որ Աւարայրի մեր քաջ նահատակներն ալ իրենց արիւնը թափեցին։ Աւագ Թր մենք զանց ըրինք զայն, մեր բուն ապաստանին կունակ դարձուցինք, մեր վստահութիւնը վերցուցինք վստահելիին վրայէն։ Կենաց ջուրին աղբիւրը թողուցինք, ինչպէս մարգարէն կ'ըսէ, եւ մեզի գուբեր փոքեցինք, ճաթուած գուբեր, որ չեն կրնար ջուր պահել։ (Երեմ. Բ. 12)։

Երկտասարդ բարեկամ, գիտեմ որ շատ բաներ կը կարգաս, բայց կը կար-

գա՞նք զիւրքեր Թր կը յանդիմանեն քեզ, նկարագիրդ կը քննադատեն, եւ քեզ կ'ստիպեն ինքզինքդ սրբազրելու։ Այս տեսակ գիրքերուն ամէնուն գլուխը կը կենայ Աստուածաշունչ մատեանը։

Անգլիացի նշանաւոր գրագէտ եւ գեղարուեստից քննադատ Ժան Րլսֆին կ'ըսէր թէ՝ ամէն գրուած ու տպուած բան գիրք չէ, եւ թէ կ'արժէ կարգաւ լոկ ճշմարիտ գիրքը, այն՝ որ իր վրայ կը կրէ յաւիտենականութեան եւ անմահութեան դրօշմը։ Լօրտ Պէյքըն, արդի գիտական փորձառական մէթոտին գտիչը, շատ ուղիղ կերպով ըսած է թէ աւելի աղէկ է մէկ ընտիր գիրք տասնեակու անգամ կարդալ, քան թէ լափել տասներկու հատոր Թր հրէթ կամ արժէք չունի։ Սկովտացի մեծ վիպասան Սըր Վոլթըր Սքոթ, երբ մեռնելու վրայ էր, իր քեռայրին ըսաւ. «Գիրքը բեր ինծի եւ կարդա՛»։ Երբ քեռայրը հարցաւ «Ո՞ր գիրքը», «Գիրքը» ազաղակեց մահամերձ մարդը իր վերջին ոյժը ամփոփելով եւ աչքերը խոշոր խոշոր բանալով, «Սը. Գիրքը, մահամերձին համար չկայ ուրիշ գիրք»։ Ոչ միայն մահամերձին, այլ ապրողի համար ալ չկայ Թրիւզ գիրք։ Գիրքերուն գիրքն է ան։ Սը. Յովհան Ոսկեբերան ասկէ՝ աւելի քան 1500 տարի առաջ «Գիրքը» — «Bible» անունը տուաւ անոր, եւ համայն աշխարհ վաւերացուց այս կոչումը։

«Կորսնցուր սա անպիտան գիրքը մէջտեղէն» պառաց անգամ մը համալրեալ բանի հայ ուսանող մը, «այդ գիրքը չէ՞ որ մեր ազգին կործանման պատճառ եղաւ»։ Կը վախճամ թէ այսօր մեր մտաւթրական սեպուած շատ մը երկտասարդներուն ալ մտածումը ասկէ

տարբեր չէ: Շատեր կ'զգուշանան Ս. Գիրքը ձեռք առնելէ, անունէն խակ կը խորշին՝ իբր թունաւոր օձէ մը: Սակայն որչա՛փ կը խաւին անոնք, Փորձէ եւ պիտի գտնես որ կեանքի գիրքն է այդ, որովհետեւ հոն պիտի գտնես ճշմարիտ այլասիրութեան դասը— եղբայրըդ, ընտանիքդ, ազգդ, դրոշմիդ, նոյն խակ թշնամիդ ճշմարիտ սիրով մը սիրելու դասը, եւ այս ոչ թէ վերացական եւ պղտատեանական, այլ գրական եւ գործնական կերպով: Ուրեմն կարգադրե՛ր, բայց կարգա՛մանաւանդ «պիւրքերուն Գիրքը»:

* *

Բայց ի՞նչ է Սբ. Գիրքը: Աստուծոյ խօսքն է ատ, եւ քրիստոնէական կեանքի համար ամենամեծ միջոցը շնորհքի: Աստուած իր Սբ. կամքը այս գրաւոր յայտնութեան մէջ արտայայտած է որոշ եւ վերջնական ձեւով: Հոն կան երբեմն բնական աշխարհէն քաղուած յայտնութիւն եւ յաճախ մարդկային փորձառութենէ բղխած յայտնութիւն ալ, բայց մեծ մասամբ ուղղակի Աստուծոյ տրուած մասնաւոր յայտնութիւն է այն:

Սբ. Գիրքը Աստուծոյ յայտնութիւնը ըլլալով հանդերձ՝ մարդկային շեղումով ու մարդոց գրիչներով գրուած է: (Դկ. 1: 4, Գործք. 1. 2.) Աստուծոյ հոգին տաւ ընդհինգ դարերու միջոցին ապրած, ու գրող բազմաթիւ հեղինակներուն բնածին կարողութիւններն ու յատկանիշները ջնջած չէ, հապա սրբագործած եւ օգտագործած է, եւ ուրախ ենք որ այսպէս է: Այս պատճառաւ Աստուածաշունչը մէկ Գիրք ըլլալէ աւելի, շատ մը գիրքերէ բաղկացած գրագարան մը եւ կամ հարուստ եւ բազմակողմանի գրականութիւն մըն է: Հոն ամփոփուած է տարբեր սեռէ պրականութեան պատկանող մատերու պատմուածք եւ պատմութիւն, կենսագրութիւն եւ

ինքնակենսագրութիւն, երգեր, աղօթքներ օրէնքներ եւ կանոններ, իմաստալից խօսքեր եւ առակներ, տեսիլքներ մարգարէութիւն, քարոզներ, վարդապետութիւններ, նամակներ եւ: Թէեւ ընդհանրապէս արձակի ձեւով գրուած, բայց մեծ մաս մըն ալ չափաքերիով ձեւով գրուած բանաստեղծութիւն է:

Սբ. Գիրքը ոչ միայն բարձրագոյն օրակէն բանաստեղծական է, հապա նաեւ իր մօզ անանդ մտքին բանաստեղծական հոգի կը ներշնչէ: Օրինակ՝ Ճան Պընեան, որ հակառակ անուս թիթեղագործ մ'ըլլալուն, Սբ. Գրքի ընթերցման շնորհիւ եղած է «քրիստոնէին ճամբորդութիւնը» գրքին հեղինակը, ինչ որ ամէնէն բանաստեղծական գիրքերէն մէկն է: Սբ. Գիրքը ներշնչում կը պարգեւէ, քանի որ ինք նիրշնչու է, Աստուծոյ շունչովը լեցուն է: Անով լեցուողը սրբութեան հոգիովը լեցուած կ'ըլլայ:

Սբ. Գիրքը ամենաժողովրդական եւ դիւրահասկնալի գրական հաւաքածոն է: Անոր գրական գեղեցկութիւնները վճայելի են, անոր բանաստեղծութիւնը, պերճախօսութիւնը, իմաստալից հրահանգները, մարդկային նկարագրի հարազատ վերլուծումները զայն անզուգական կ'ընեն, օրով ատիկա Աստուածաշունչ մատեան ըլլալով հանդերձ՝ ամէնէն մարդկային գիրքն է միանգամայն: Աշխարհիս ամենամեծ գրականութիւնն է՝ մանաւանդ կրօնական կեանքի տեսակէտէն, որովհետեւ հոն խտացած է բազմաթիւ դարերու հոգեւոր գերագոյն փորձառութիւնը: Կեանքի հայելին է ան եւ կեանքի խորհուրդներ կ'ուտայ մարդուն: Ասիկա խորապէս ազդած է քաղաքակիրթ աշխարհի գրականութեան վրայ: Շեյքսպիրի, Վիգթոր Հիւկոյի, Սէնքիէվիչի, Թէնիսընի, Թալսթոյի պէս ամենամեծ գրողներու

գործերը անկէ. վկայութիւններով և ականարկութիւններով լեցուն են:

Մերիններէն շատերը կը խորհին թէ Սբ. Գրքը լոկ հրէական պատմութիւն մըն է, անհաւատալի առասպելներով լեցուն: Ուստի կ'առարկեն թէ «կ'արժէ՞ այս Հրէից պատմութիւնը կարդալ»: Այս առարկութիւնը կրնայ բերուիլ Հին Կտակարանի դէմ առ առաւելն. բայց եթէ Հին Կտակարան մինչեւ անգամ պարզ պատմութիւն մ'ըլլար, նորէն կ'արժէր զայն կարդալ: Ամէն պատմագրութիւն ըստ ինքեան վեհ է, բայց մանաւանդ երբ քաղաքակրթական ազդեցութիւններով լեցուն է, այն ատեն դաստիարակութեան անհրաժեշտ մէկ մասը կ'ըլլայ: Ինչո՞ւ տարիներ կը յատկացնենք հին Յունաց և Հռոմէացիացի պատմութիւններուն ուսուցման: Քանզի կը խորհուի թէ բարձրագոյն աստիճանէ քաղաքակրթական ազդեցութիւններով լեցուն են: Սբ. Գրքն ալ այսպէս և աւելի եւս է, բարոյացուցիչ և կրթիչ ազդեցութիւններով առընթացուն: Հին Կտակարանը՝ հակառակ երեւութապէս ազգային գրականութիւն մ'ըլլալուն, ամէնէն համամարդկային գրականութիւնն է: Ջարմանալի կերպով մարդկայնական կեանքով ու ոգիով լեցուն է ան: Ոչ մի պատմութիւն, ոչ մի օրինագիրք, ոչ մի ուրիշ կրօնքի գիրք կրնայ անոր տեղը բռնել, ընդհակառակը ինք կարող եւ բաւական եղած է բոլորին տեղը բռնելու: Ինչո՞ւ արդեօք, Քանզի հոն ներկայացուած ազգը Կրօնի հանձնարը ունէր գերազանց աստիճանով, նամանաւանդ, քանզի Աստուած յատկապէս ներկայ եղած է այդ ժողովուրդի ազգային կեանքին մէջ, բացառիկ աստիճանով ինքզինքն յայտնած, գործած և խօսած է հոն:

Եթէ Երուսաղէմի տաճարին նմանցնենք ամբողջ Աստուածաշունչը, հարկ է ըսել որ անոր գաւթիքներն են Հին Կը-

տակարանի գիրքերը, նոր Կտակարանն է բուն սրբարանը, իսկ չորս Աւետարաններն են Սրբութիւն Սրբոցը: Յիսուս Քրիստոսն է Շէխնան (Աստուածայայտութիւնը), «Քանզի Աստուած մարմինով յայտնուեցաւ» (Ա. Տրմ. Գ. 16) Աստուծոյ խօսքն է այս գիրքը. տարակոյս չունենանք ասոր: Երբ համայնք մը ամբողջութեամբ կամ գոնէ մեծամասնութեամբ հետեւի այս գրքի խօսքերուն, երբ կառավարական կազմակերպութիւնը Սբ. Գրքի մէջ յայտնուած բարձր բարոյականի, արդարութեան, սրբութեան և սիրոյ սկզբունքներուն վրայ հիմնուի, այն ատեն անտարակուսելի է արդիւնքը— ազգային յառաջդիմութիւն և անհատական բարօրութիւն և երջանկութիւն: Ուր որ քիչ թէ շատ լրջօրէն կատարուած է փորձը, միշտ այս բարերար արդիւնքը տեսած է ան: Երբ ար անհատ մը իր սրտին ու հոգւոյն մէջ ընդունած է այս Գրքին խօսքերը, հիմնական փոփոխութիւն մը յառաջ բերած են անոնք իր կեանքին մէջ ղէպի բարին:

Գրութեանս սկիզբը ըսի թէ մեր Սբ. Գրքը հին Պարսից Զէնդաեստայէն անհունապէս աւելի վստահելի է: Իր գերազանցութիւնը հոն է մանաւանդ որ մերինը ԱՌԵՏԱՐԱՆ է նաև այսինքն՝ «բարի լուր»: Անկէ մեզի լուր կուտայ մեր Երկնաւոր Հայրը, որ է Աստուած ինքը, լուր կուտայ Փրկիչ մը որ կարող է ազատել մեզ հոգեւորապէս և բարոյապէս անկարող վիճակէն որուն դատապարտուած ենք մեղքի պատճառաւ և առաջնորդել մեզ Աստուծոյ հետ հաղորդակցութեան, անցոյց կուտայ նաև երկնային բնակարանները, Հօրը տան մէջ, ուր կրնանք հանգչիլ յաւիտեան այս կեանքի պանդխտութենէ ետքը: Ուստի յոյժի գիրքն է ան: Երբ անհատական յուսոյ, և ամենաբարձր տեսակէն լաւատեսութեան: (Շար. ԿՅ 227)

ԴՈՒՆ Կ'ԱՂՈԹԵՍ

Դրեց՝ Յ. ՉԱԳՄԱԳՃԵԱՆ

1. Ի՞նչ է Աղոթքը.— Աղոթքը՝ հիմայ-
քի և կախարդութեան զարգացեալ մէկ
ձեւը է, այլ, Աստուծոյ հետ հոգեկան
հպում ունենալ է։ Ռատիօ մըն է որու
միջոցաւ Անոր հետ յարաբերութեան
մէջ կրնանք ըլլալ, «նօսք ընդ Աստու-
ծոյ» է։ Մեր կամքը Աստուծոյ վրայ
պարտադրել է, այլ Անոր կամքը հաս-
կընալու աշխատիլ է, միայն մեր ըղ-
ձանքները և կարօտութիւնները աղերսել
է, այլ Աստուծոյ բաղձանքները ըմբռ-
նելու ճիգ մըն է. «Ո՛վ Տէր, ինծի տու՛ր
... տու՛ր» ըսելով մօւրացկանութիւն
ընել է, այլ «Ո՛վ Տէր, ի՞նչ կ'ուզես որ
ես տամ» ըսել է. «Ո՛վ Տէր, այս կամ
այն բանը ըրէ՛» ըսել է, այլ «Տէ՛ր,
ի՞նչ կ'ուզես որ ես ընեմ» ըսել է։ Դու
այս իմաստով կ'աղօթե՞ս։

2. Ինչո՞ւ կ'աղօթեմ.— Որովհետեւ
պէտք կ'զգանք։ Յախճանակաւ ճանչ-
նալու և սիրելու անզուսպ փափաքով
մը ծնած ենք։ Այսմեր բնութեան ա-
մէնէն էական մէկ պահանջն է։ Մենք
զմեզ չըջապատուած կ'զգանք Անով,
և կ'ուզենք զԱյն ունենալնաւ մեր սր-
տերուն մէջ ու կ'աղօթենք։ Յաճախ
մենք զմեզ առանձին և մխիթաբու-
թեան կարօտ կ'զգանք ու վեր կը նա-
յինք, այսինքն կ'աղօթենք։ Ուստի
մեր աղօթքին նպատակակէտը ըլլալու
է Աստուած ինքը։ Աղօթքով մենք
պէտք է խոնարհինք Անոր առջև։ Իր
բարիքներուն համար զոհանանք, իր
թագաւորութեան տարածման վրայ
խորհրդածենք, մեր տկարութեանց և
փորձութեանց մէջ ոյժ հայցենք, ծա-
ռայութեան համար պատրաստութիւնք,
իր պատկերին նմանինք։ Ահա աղօթ-
քի նպատակը։ Այս առումով դուն
կ'աղօթե՞ս։

3. Ի՞նչ է Աղոթքի արդիւնքը.— «Քանի
որ բնութեան կանոնները անյիշիլ ևն
աղօթքը անիմաստ է» կ'ըսուի յաճախ։
Սակայն ո՞վ կրնայ ըսել թէ Աստուած
իր գրած օրէնքներուն իշխանն ու կառա-
վարիչը չէ՞, այլ, գերին է։ Այսուհան-
դերձ աղօթքը ոչ թէ միայն Աստուծոյ
և Անոր օրէնքներուն ազդելով՝ այլ մա-
նաւանդ աղօթողին հակազդելով է որ
բարերար արդիւնքը յառաջ կը բերէ։
Այսինքն աղօթողը կը զօրանայ, հաս-
տատամիտ, քաջ և եռանդուն կ'ըլլայ։
Աստուծոյ հետ ներդաշնակութեան
կռուկայ։ Իր կամքը, խորհուրդներն ու
տենչանքը Աստուծոյ կամքին ու նպա-
տակին հետ կը նայնանան։ Դուն կ'ա-
ղօթե՞ս։

4. Մեր աղօթքը կը մատուցանենք
և կը փակենք «Թիսուսի անուամբ»։
Աս՝ կախարդական բանաձեւ մը չէ,
այլ ատու ըսել կ'ուզենք որ մեր
փափաքն է Թիսուս Քրիստոսի անձին և
գործին հետ նոյնանալ։ Կ'աղօթենք որ
Թիսուսի նպատակը, առաքիւթիւնն
ու զոհողութիւնը մեր կեանքին ու աշ-
խարհի մէջ արդիւնաւոր ըլլան։ Եթէ
մեր աղօթքները հակառակ են Թիսուսի
նպատակին, նկարագրին, խաչին և
վարդապետութեանց, անոնք անպա-
տասխանի պիտի մնան։ Անհաւատ,
աններող, ամբարտաւան, քինախնդիր,
անձնասէր և ինքնակեղրոն մարդիկ չեն
կրնար աղօթել։ Դուն կ'աղօթե՞ս։

5. Աղոթքի պատիւսանը կրնայ ուշա-
նալ, կրնայ մեր բաղձանքին հակառակ
ուղղութեամբ տրուիլ, կրնայ բոլոր-
ովին մերժուիլ, կրնայ անմիջապէս չը-
նորհուիլ։ Սակայն աղօթքի հակազ-
դեցութիւնը մեր վրայ անմիջական է։
Վատահետեւութիւն, համբերութիւն, քա-

Ղութիւն և զօրութիւն կը ներշնչուի մեզիս: Կ'զգանք թէ ներկայութիւն մը մեզ շրջապատած կը խրախուսէ և կ'օգնէ մեզի փորձութեանց, դժուարութեանց և կենճոռութեանց մէջ: Միտքն աւ հօգին բացարձակ խաղաղութիւն կը վայելին:

Երբ ծուներ դանք և խոկանք, մեր Հօրը կամքը իմանալու բաւուն և անկեղծ փափաքով՝ կ'զգանք թէ տիրե-

զերքի Արարիչը՝ բարութեան լրումը, Սիրոյ աղբիւրը, Արդարութեան և Սըրբութեան մարմնացումը եղող Անտեսանելիին իրականութիւնը մեր հետն է. Անոր հետ ներդաշնակութեան կուգանք, Անոր հետ գործակցելու կ'ըսկըսինք, Անկէ զօրութիւն և ներշնչում կ'ստանանք, Յիսուսի կը նմանինք: Դուռն կ'աղօթեմ:

Տէ՛ր, աղօթք ընել սորվեցուր մեզի:



ԱՌԱՒՕՏԵԱՆ ԺԱՄԵՐՍ

Կեանքիս առաւօտին չափ կը սիրեմ օրուան առաջին թարմ ու քաղցր ժամերը: Միտքս աւ հոգիս պահ մը իրենց թօթափուսներէն զերծ՝ առաւօտեան զով զեփուռին հետ միասին վերացումի բոցէնք կ'ապրին և ես կ'առաջնորդուիմ, իմ ստեղծագործ ոյժին հետ շրջափակի, անկէ ներշնչումի զօրութիւն ստանալու:

Օրհնեալ են այդ ժամերը ինձ համար, քանզի անոնք կը լուծեն՝ ինծի անլուծելի երեւցող շատ մը խնդիրներ, կը լուսաւորեն միտքս, հօգիս աչքերը կը բանան: Այդ պահուն Սր. Գրքի ընթերցման մէջ կը գտնեմ կենացս հասը և կենսատու ջուրի աղբիւրը ուրկէ քաղցըս ու պապակս կ'անցնեմ լի ու լի:

Առտուան այս վերհայեցումը առօրեայ կեանքիս պարտականութիւնները կատարելու ատեն ինծի անիմանալի զօրութիւն և իմաստութիւն կուտայ, երբ փորձութեան ենթարկուիմ զիս կ'զգուշացնէ և կը փրկէ: Կեանքի մասին ինծի ուրիշներէ տարբեր եւ սակայն որոշ տեսութիւն մը կուտայ: Բոլոր կեանքիս մէջ հոգեկան գոհացում գտած եմ օրուան այդ զուարթարար եւ կ'ենսաբեր ժամերը Տէրջոնութիւնով:

Յ. Պ.

ԴԷՊԻ ՎԵՐ ՄԱԳԼՑԵԼՈՒ ԱՏԵՆ...

Այպեաններու վրայ տեղ մը արձան մը կայ Թրլեոն մագլցելու ատեն կեանքը զսկող առաջնորդի մը յիշատակին կանգնուած է, և որուն վրայ հետեւեալ արձանագրութիւնը կայ. «Վերելքի ատեն մեռաւ: Նա հերոսական կեանք մը կ'արտայայտէ: Մարդը երեսը դէպի յառաջ ինկաւ. իր պարտականութիւնը կատարած ատեն մեռաւ. բարձունքը չհասաւ, սակայն դէմքը դէպի գազաթը ինկաւ. վերելքի ատեն մեռաւ: Աստուած և մարդիկ կ'ըսեն. «Ապրիտ: Աս է մեր առնելիք դասը հաւատքի հերոսներէն: Ասոնց ամէնքը հաւատքով վկայուած՝ խոստմունքը չ'առին. (Եբր. 11:39) Անտեսանելիին ամուր բռնեցին տեսանելիին պէս. իտէալներ ունէին. իրենց երազները մարմնացուցին, դէպի բարձրերը մագլցեցան բայց խոստմունքին չ'առան. թէպէտ գազաթը չ'հասած մեռան, բայց վերելքի ատեն մեռան: Աշխարհ չէ գաղբած երգելի իրենց ձեռնարկին մասին. Եբր. 11:32—34: Մեր Տէր Յիսուս Քրիստոսի կեանքէն մեզի հկող վտեմ պատգամը սա է. այդ կեանքը նիւթական տեսակէտէն չափուելով դեռ անյաջող, բայց գաղափարականի մը արժէքով չափուելով իր յաղթութիւնը անվերջ է: Երբ մեր կեանքի

Ո՛Վ ԿՈՒՋԵՍ ԸԼԼԱԼ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՔ

Բաց նամակ որդիս Պետրոսին

Սիրելիս,

Ա՛լ երիտասարդութեան սահմաններուն մօտեցար, ուստի քու տնայնակարեւոր որոշումդ պէտք է տաս թէ ի՞նչ պիտի ըլլայ քու դիրքդ եկեղեցւոյ հանդէպ: Մինչեւ հիմա քու կըրօնքդ խորհրդածութեան եւ ընտրութեան արդիւնք չէր այլ միայն քու ծընողքիդ հետեւիլ: Այսուհետեւ դու պէտք է ունենաս քու անձնական կրօնքդ եւ քու պատճառներդ զայն ընտրելուդ համար: Կար ժամանակ մը երբ Յակոբ կ'աղօթէր: «Ով իմ հօրս Աբրահամի եւ Իսահակի Ասուածը» ըսելով, բայց եկաւ ժամանակ մը երբ նա ըսաւ «Ով իմ Ասուածս որ իմ ներշնչութեանս մէջ ինձ յանձնեց եւ իմ զացած ճամբունս մէջ ինձի հետ եկաւ» (Մենդ. 35. 3): Դու ալ այժմ եկեղեցիին մէջ որոշ արժանիք մը տեսնելով կամ չտեսնելով նոր դիրք մը պիտի բռնես անոր հանդէպ: Ուստի.

1. Նախ պէտք է քեզի իմաց տամ որ եկեղեցւոյ հանդէպ անտարբեր հանդիսասես ի մը դիրքը բռնել կարելի է քեզի համար, սակայն ինչպէս որ կշիռքի նկարի մը վրայ ինկող շուքը չի կրնար անոր ազդել, նոյնպէս ալ ասանկ երիտասարդի մը կեանքն ալ ապարդիւն ե

վախճանին հասնինք արդեօք մեզի համար ալ պիտի ըսուի՞ թէ «դէպի վեր, դէպի Աստուած վերելքի առնն միտաւ»:

ՏԻԿ. Ա. ՓՕԼԱՏԵԱՆ

Ահա ես դուռը կայներ եմ ու կը զարնեմ, եթե մէկը իմ ձայնս լսէ ու դուռը բանայ, անոր քով պիտի մտնեմ եւ անոր հետ ընթրիք պիտի ընեմ:

ՆԱԶՈՎՐԾՅԻՆ

անօգուտ պիտի անցնի, իսկ անոր մահաւամբն ալ ո՛չ եկեղեցին բան մը պիտի կորսնցնէ եւ ո՛չ ալ երկինք բան մը պիտի չահի: «Ոչ չափ եւ ոչ պաղ» եղող ջուր մըն է միմիայն «փսխուելու» արժանի է (Յայտ 3. 15—16): Աւելին կայ. անտարբեր ըլլալ թշնամի ըլլալ ըսել է: «Մարովզին... բնակիչները սասիկ նզովեցէ՛ք, քանզի... զօրաւոր թշնամիներուն դէմ Տերոյն օգնութեանը չեկան» (Դատ. 5. 23) «Պե՛տք չէր որ անորօտութեան օրը դիմացին նայէիր»: (Արդ. 12): Ան որ ինձի հետ չէ ինձ հակառակ է»: (Մատթ. 12. 30):

3. Նաեւ՝ իբր երիտասարդ մը կարելի է որ եկեղեցիի հանդէպ զբնականական դիրք մը բռնես: Պօղոսն ալ երբ երիտասարդ էր եկեղեցիին շատ վնաս կ'ուսար (Գործք. 8. 3): Թէպէտեւ եկեղեցիին դէմ պայքարել այնքան անիմաստ է որքան երկրիս ընթացքը՝ փոխելու համար մարախի մը ցատկոտելը, կամ եզան մը խթանի դէմ կից պարնելը, այսուհանդերձ երիտասարդ մը կրնայ թըշնամական դիրք մը բռնել:

Երիտասարդութիւնը գննութեան եւ ճշնադատութեան շրջան մըն է երբ քննութենէ կ'անցնեն ամէն տնոնք գորս կը յարգէր եւ որոնց կը հնազանդէր, նաեւ բոլոր կազմակերպութիւնները եւ նոյնիսկ յաւիտենական սկզբունքները: Անոնց մէջ թերութիւններ կը նշմարէ եւ զանոնք կը վարկաբեկէ եւ նոյն իսկ կործանելու կ'իլլէ: Չի կրնար հին բաներուն համբերել, անոնց մէջ տեւէ արժէք չի նշմարեր, իր քննադատութեան մէջ անգաւթ, եւ իր վճիռներուն մէջ անխնայ է: Ամէնէն գէշը տն է որ տն «այսպէս ընել պարտք կը սեպի» (Գործք 36. 9), «սպաննելու ատեն այնպէս կը սեպի

թի Աստուծոյ պաշտօն կը մատուցանէ» (Յովհ. 16: 2) Այսու հանդերձ ասանկ երիտասարդի մը գրամատակութիւնը անոր անկեղծութիւնն է: Հակառակ իր թըշնամութեան, հազարաւոր անասորի հանդիսատեսներէն աւելի լաւ են որովհետեւ իրենց համոզումներուն եւ գործելակերպին մէջ անկեղծ են: Ասիկա ինծի յարմար առան մըն է իմ անունս կրեցու հետախուսելուն եւ քաջաւորներուն... առջեւ» (Գործք. 9: 15) Այս խօսքը անոնց մասին ալ խօսուած է:

Ուստի դուն ալ յստակ մտքով ու անկողմնակալ ոգիով անցեալի եւ ներկայի մէջ եկեղեցիին մատուցած ծառայութիւնը ուսումնասիրէ: Եթէ կը համոզուիս որ ան վնասակար կազմակերպութիւն մըն է, կրնաս բացէ ի բաց անոր հանդէպ թշնամի ըլլալ: Ահաւասիկ քու ազնիւ զգացումներուդ եւ կրօնական աշխատանքիդ ընդարձակ դաշտ մը:

3. Երիտասարդի մը համար կարելի է երրորդ դիրք մը եւս աւենեալ թիւն է «Ի՞նչ ոյժովը եկեղեցիին մէջ գործելու ելլել» Երբ Պօղոս Դամասկոսի ճամբուն վրայ (Տէ՛ր, ի՞նչ կ'ուզես որ ես ընեմ) ըսաւ՝ մէկ ծայրահեղութիւնէ միւս ծայրահեղութիւն ցատկեց: Երիտասարդը չի կրնար միջակ դիրքի մը վրայ կայնիլ: Ան՝ կա՛մ կը քանդէ կա՛մ կը շինէ, կա՛մ ծայրայեղօրէն կ'ատէ կա՛մ ծայրահեղօրէն կը սիրէ, մեռցնելու կամ անոր սիրոյն համար մեռնելու պատրաստ է: Երիտասարդին թշնամութիւնը շահիլ դժբաղդութիւն մէ իսկ սէրը գրաւել առանձնաշնորհում մըն է: Անոր ատելուն եւ սիրելուն միջև, ժամանակի, միջոցի, աստիճանի կամ մտածողութեան տարբերութիւն մի՛ փնտռեր, պատճառները շատ մի՛ պրպտեր, որոհեաւեւ ան միտքէ աւելի զգացումով կը գործէ:

Քեզի համար վտանգ կայ խորհելու

թէ դուն շատ կարողութիւններ ունիս, աւելի մեծ վտանգ է քեզի ըսել թէ «դուն եկեղեցիին մեծ ծառայութիւն կրնաս մատուցանել, դուն կրնաս անմիջապէս յառաջացնել կատարելութիւնը որ պարերու փորձառութիւնը միայն պիտի կրնար արտադրել, որովհետեւ դուն շատ կարող մէկն ես» Արդեօք այս շիտակ է: Դուն ի՞նչ ունիս եկեղեցիին աւելի քան նախապէս անկէ առած չես: Դուն կարո՞ղ ես աւանդը ըլլալէն առաջ ուսուցիչ, բանոր ըլլալէն առաջ ճարտարապետ ըլլալ, Դուն լողալ սորվելէն առաջ ուրիշները խեղդամահ ըլլալէն ազատելու կարողութիւնը ունի՞ս միթէ: Եթէ թիւնի տերեւը միտաքօսի եւ ազեղ թրթուրը սիրուն թիթեռնիկի պիտի կերպարանափոխուի, ատոր մէջ միթէ եղանակը գործ չունի:

4. Երիտասարդի մը համար եկեղեցիին մէջ չորրորդ դիրքը ըրալու դիրքն է: Երբոր Պօղոս ի՞նչ կ'ուզէ որ ընեմ» ըսաւ անոր ընկնու հաւար գործ յարուցաւ այլ ըրալու հաւար առիթ տրուցաւ: Անանիա ըսաւ. «Ես հիմայ, ա՛յ ի՞նչ կ'ուզանաս, եղբօր, միտե՛մ ու մեղքերդ յուս անոր անունը կանցելով» (գործք 22. 16), եկեղեցիին մէջ գործ տեսնելէ առաջ պարզ եւ հաստատ պայմանը ահաւասիկ այս է: Ազօթքի միջոցաւ Աստուծոյ հետ յարաբերութեան մտնել եւ իբր արգիւնք մեղքէն լուացուիլ եւ Սբ. Հոգւով մկրտուիլ: Յիսուսի բառերով «վերստին ծնանիլ» անհրաժեշտ է:

Երբ «եկեղեցին երիտասարդներուն պէտք ունի», «եկեղեցին երիտասարդութիւնն է» ըսուի, շատեր միայն տարիքը հասկնալով կը սխալին: Դուն եկեղեցիին նպատակին յարմար մէկը չես ըլլար, քանի որ երկրագունդը քեզ 20-25 անգամ արեգակին շուրջ դարձուցած է: Մտքի սրութիւնը, շարժումներու տրագութիւնը եւ երիտա-

սարգսութեան յատուկ շատ մը հրապօր-
ները չեն կրնար քեզ եկեղեցիի չափանի-
շով երիտասարդ մ'ընել: «Սոսանց վե-
րսին ծնունդի» կատարուած ամէն ջանք,
որքան ալ հրապուրիչ ըլլայ ան, «Ձայն
տուղ պղինձ եւ հնչեցող ծնծղայ» . եղած կ'ըլ-
լայ: Ձայն շատ, ներդաշնակութիւն
քիչ, ճիշդ շատ, բայց արդիւնք չկայ:
Ուրիշ կրօնքներ և ընկերութիւններ վե-
րստին ծնունդը քեզի իբր պայման չեն
ներկայացներ, սակայն առաջին և վեր-
ջին ու ամենաէական բանը որ եկեղեցին
քեզմէ կը պահանջէ ահաւասիկ այս է:

Այս իմաստով երիտասարդ մը իր
ցուցուցած աւեսարանցական ոգիով «Բրիս-
տսի փառք եւ եկեղեցիին ոյժ եւ» (Բ. Կոր. 8.
23): Կը կարգանք որ Պողոս «անմիջա-
պէս ժողովուրդներու մէջ կը քարոզէր
թէ անիկա է Աստուծոյ որդին... և կը
պապանձեցնէր ապացուցանելով թէ
«Բրիտոս ասիկա է (Գործք. 9. 20, 22):

Ահաւասիկ Աստուծոյ ձեռքը գոր-
ծածուող երիտասարդը, եկեղեցին երեսա-
սարդացնող երիտասարդը: Երիտասարդ մը
որ կրնայ առանձին կենալ, հողիններու
աշխարհին դէմ պատերազմ յայտարա-
րել, հրաշքի մէջ բնական օրէնք գտնել,
անկարելիին մէջ կարելին նշմարել,
մարդկութիւնը բաժան բաժան ընող
աղգութեան պատնէշները քանդել, և
«Բոլորս մէկ արիւնէ ենք» պոռալ, ներ-
կայ պարտութենէն դէպի վեր թռչելով
զաւիթ յաղթանակով ուրախանալ և ու-
րիշները ուրախացնել: Ի՞նչ մեծ ոյժ,
ի՞նչ քաջ հերոս մը, բայց ասոր փառ-
քը իրեն չէ: Ես ասկէ քանի կարող եմ
անով որ զիս զօրացուց» ըսելով աշխարհի
կը յայտնէ այս բանը:

Ուստի, որդեակ իմ, խնդիրը լըջօ-
րէն և աղօթքով ուսումնասիրէ: Դռն
եկեղեցիին վեջ ի՞նչ կ'ուզես ըրիտ, անօ-
գուտ շո՞ւք, հալածող թշնամի՞, ըլլալէն
առաջ ընելու, սորվելէն առաջ սորվեց-
նելու ելլող մէկը, եթէ ոչ վերատին

ծնած և սուրբ հողիին ձեռքը անցած
գործաւոր մը: Դարձեալ կը կրկնեմ
թրանկեղծութեամբ և յարատեութեամբ
աղօթէ որ Տէրոջ շնորհքով կարենաս
չիտակ ընտրութիւնը ընել զոր յիշելով
տարիներ վերջը՝ ուրախ պիտի ըլլաս:
ՀԱՅՐԴ

ՎԵՐ. Ս. Ս. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ԻՆՉՈՐԻ ԵԿԵՂԵՑԻ ԿԸ ՅԱՆՈՒՄԵՄ

Եկեղեցի յաճախելը դարուս երիտա-
սարդներուն համար դժուարին խնդիր
մը դարձած է. սակայն ինծի համար
այդպէս չէ երբ լաւ ըմբռնած եմ եկե-
ղեցի յաճախելու իսկական նպատա-
կը: Վախի և պարտականութեան ըզ-
գացումը չէ որ զիս հոն կը մղէ, այլ
յարգանք, սէր և հաւատք անոր նպա-
տակին հանդէպ որ է մարդիկը Աստու-
ծոյ առաջնորդել:

Եկեղեցի կ'երթամ և կը մասնակցիմ
անոր յառաջդիմութեան գործին որով-
հետեւ կը հաւատամ անոր կոչումին
վեհութեան:

Ես եկեղեցի չեմ յաճախեր ունկընդ-
րելու համար հեռուորական սրտայոյզ
ճառերու և բանախօսութիւններու, այլ,
պաշտելու համար իմ արարիչս ձայ-
նակցելով ինծի նման մարդկային արա-
րածներու: Ես կը հաւատամ անոր
պաշտամունքներուն:

Կը հաւատամ նաեւ որ եկեղեցին մեծ
արժէք կը ներկայացնէ հասարակաց
կեանքին մէջ: Կը հաւատամ որ ո՛չ
դպրոցը, ո՛չ կառավարութիւնը և ո՛չ
ալ ընկերային գործիչները կրնան անոր
կատարած դերը կատարել:

Կարգ մը մարդիկ եկեղեցիին հոգա-
տար պաշտօնեաներէն վշտացած՝ ի
սպառ կը հեռանան եկեղեցիի սեմէն,
պատրուակելով թէ անոր խօսածը ի-
րենց ոչ միայն անհաճոյ՝ այլ տաղտկա-

լի և ունայն կը թուի։ Այս շիտակ չէ։
Ես ալ յաճախ եկեղեցիին մէջ մարդոց
հանդիպած եմ, որոնց հանդէպ ամէն
յարգանք կորուսեր եմ, նոյն իսկ եր-
բեմն եկեղեցւոյ հովիւն ու անոր քա-
րոզները ինծի հաճելի չեն թուած, սա-
կայն ատիկա պատճառ մը չէ եղած որ
ես իմ հաւատքս կորսնցնեմ եկեղեցիի
հանդէպ։

Երբ ես իմ վերջին հրաժեշտս տա-
լու ըլլամ աշխարհի, պիտի փափաքէի
սնարիս մօտ ունենալ եկեղեցիի պաշ-
տօնեայ մը, լսել անոր սփոփարար
խօսքերը և աղօթքը և աչքերս փակել
եկեղեցիի շուքին ներքեւ։

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԻՍԻՐԼԵԱՆ,

ԵՍ ՔՈՒ ԵԿԵՂԵՑԻԴ ԵՄ



Հրատ

Ես քու եկեղեցիդ եմ։

Տարիներէ ի վեր գիտէի որ դուն օր
մը իմ գոներէս ներս պիտի դաս, ուստի
ինքզինքս քեզի համար պատրաստեցի։

Իմ ծառայութեանս մէջ եղող մեծ
մարդիկ միտք յօգնեցուցին իմ հանգա-
նակներս շինելու և վարդապետութիւն-

ներս կազմելու, ոչ թէ քու միտքդ չըղ-
թայելու այլ քեզ առաջնորդելու։

Դարերով ընտրեալ մարդիկ իմ պաշ-
տամուէքի արարողութիւններս կատա-
րելագործած, երգերս գրի առած, և իմ
աննման երաժշտութիւնս և գեղարուես-
տի գլուխ գործոցներս շարադրած են
քեզի համար։

Իմ տաղանդաւոր քարոզիչներս և
կրթութեան գործին նուիրուած առաջ-
նորդներս քեզի համար գործած և երա-
զած են։

Շատ մը անձնուէր մարդոց նուիրա-
տութեամբ մօտդ շինուած շէնք մը
ունեցայ ուր պիտի կարենայիր յաճա-
խել հազիւ նոր քալելու սկսած մանուկ
մէջիւր և որուն մէջ այսօր պիտի կրնաս
սրտիդ բոց երազներուն և երեւակա-
յութիւններուն քրիստոնէական նըպա-
տակ մը և հայեացք մը ստանալ, և քու
հօգիդ Աստուծոյ մէջ հաստատել քու
երիտասարդութեանդ մէջ։

Ուրեմն գործածէ՛ պատեհութիւնդ,
ով երիտասարդ, որ քու կեանքդ աւելի
բեղմնաւոր ըլլայ, և քեզմով Աստուծոյ
թագաւորութիւնը աւելի արագ հաս-
տատուի մարդոց մէջ։

Ես քու եկեղեցիդ եմ։

Թարգմ.

Բ. ԳԱԼՖԱԵԱՆ

ԱՌԱՆՁԻՆ ՄԵԱՅԱԾ ԿՐԱԿԸ

Եկեղեցի շատ քիչ յաճախող մարդ մը կար
որ կը խորհէր թէ առանց եկեղեցի երթալու
ալ կրնար նյութան քրիստոնեայ եւ հոգեւոր
ընթացքով շուրջը ասոր համար շատ ցաւ կ'ըղ-
գար եւ յաճախ կ'այցելէր զինքը։ Նոյնիւր
շատ իմաստուն մարդ մըն էր. օր մը երբ նո-
րէն այցելեց զայն եւ նոյն պատասխանը ա-
ռաւ, ունելիով կրակարանէն կարմիր վառած
կրակ մը առնելով օճախին մէկ կողմը դրաւ
առանց ոեւէ բառ մը ըսելու։ Մի քանի րո-
պէէն կրակը ինքնին մարեցաւ։ Մարդը հաս-
կընալով հովիւին ըսաւ. «Պէտք չէ բան մը ա-
ւելցնել, Տէր իմ, Կիրակի օրը եկեղեցի պիտի
գամո՞ Անկէ վերջ կանոնաւորապէս յաճա-
խեց եւ օրհնուեցաւ։

ԶԱՆԻՅԸ ԻՐ ԵՐԻՏԱՍՏԱՐԴ ՀՈԳԵՒՈՐ ՇՍՐԺՈՒՄ

Այս տարուայ եկեղեցիներու միութեան ժողովին մէջ կարգապահած տեղեկագրութենէն տեսնուեցաւ որ, Զանիցի գաղափարը տակաւ առ տակաւ հող կը գտնէ մեր եկեղեցիներուն մէջ: Դամասկոս, Հոմա, Պէյթիաս, և Ճարապլուս Ե. Ք. Զ. Ընկերակցութիւններ կազմուած են: Ասիկա անշուշտ քաջալերական երեւոյթ մըն է, այսուհանդերձ մենք պէտք է նկատի ունենանք որ ժողովուրդականացած և պաշտօնական հանգամանք ստացած շատ մը կազմակերպութեանց նման՝ ան ալ իր իսկական ոյժը հիմնական սկզբունքը կրնայ կորսնցնել: Քրիստոնէական եկեղեցին հրը Հոռոմէական պետութեան կրօնքը դարձաւ, այդ օրէն սկսեալ իր իտէալներուն մեծմասը զոհ տուաւ պետութեան պաշտպանութեան փոխարէն: Երբ քանակը շատցած է որակը թեթեւցած է, երբ շարքերը ստուարացած են իտէալի ռազմութիւնը պակսած է: Ուստի յարմար կ'ըլլայ որ մի քանի կէտեր ուշադրութեան յանձնենք որպէս զի զգոյշ ըլլանք մեր քայլերուն մէջ:

1.— Զանիցը կազմակերպութիւն մը ըլլալէ աւելի հոգեւոր շարժում մըն է: Թերեւս կազմակերպութեան և ընկերակցութեան համար թիւը կարեւորութիւն ունի, բայց հոգեւոր շարժումը մէկ կամ երկու հոգիով նոյն իսկ կրնայ յառաջ տարուիլ:

2.— Զանիցը երիտասարդներու հոգեւոր շարժումը ըլլալով հանգերձ երիտասարդ հոգեւոր շարժում մըն է: Այս կը նշանակէ թէ հոգեւոր կեանքը միշտ թարմ և յարատեւ նորոգուած ըլլալու է: Ոչ թէ միայն երիտասարդներ քրիստոնեայ ըլլալու են, այլ, քրիստոնէական կեանքը կենսունակ և երիտասարդ ըլլալու է:

3.— Այս շարժումին գլուխը Քրիստոս ինքն է: Ուստի բոլոր ներշնչութիւնները Ան ըլլալու է, մեր գործունէութեան բոլոր դիմերը Անոր հոգիով մղուած, այդ միակ Դէմքը արտացոլանող և Անոր կամքին համաձայն ըլլալու են:

4.— Այս երիտասարդ հոգեւոր շարժումը Քրիստոսի մարմնին մէկ անդամն է, եկեղեցիին մէկ մասնիկը կամ բաժանումը: Զանիցը իր հիմնական նպատակէն շեղած կ'ըլլայ երբ իր եկեղեցիին միջոցաւ Քրիստոսի յառաջ տարած ծրարագրէն դուրս մնայ:

5.— Կայ կանոնադիրք մը որու մէջ այս հոգեւոր երիտասարդ շարժումին սահմանադրութիւնը գրուած է և անոր ուղեգիրը կը պարունակէ: Սբ. Գիրքըն է այն: Ուրեմն բոլոր անդամներուն այս օրէնքներուն ծանօթանալու համար Սբ. Գրքի առօրեայ ընթերցումը անհրաժեշտ պայման մըն է:


6.— Քրիստոսի, այս շարժումի պետին հետ յարաբերութեան մտնել և Անկէ հրահանգ ստանալ պայման մըն է շարժումին հոգիին հաւատարմ մնալու համար: Այս յարաբերութիւնը՝ մի միայն աղօթքով կարելի է, ուստի ամէն մէկ անգամ նուիրական պարտականութիւն համարելու է ամէն օր աղօթել:

7.— Ընկերները իրարու կապող միակ կապը սիրոյ և բարեկամութեան կապն է, առանց անոր շարքերը չեն կրնար միանալ՝ միասնաբար գործելու համար: Ուրեմն սիրել Յիսուսը բոլոր սրտով և մեր ընկերը մեր անձին պէս, ընկերութեան համար սիրելի պայման մը ըլլալու է:


Կ'արժէ որ ընկերութիւններ շարժումը յատկացնեն այս եօթը կէտերը խորհրդածելու ընդլայնելու համար:

ՊԱՏ. Թ. ԱՐԳԱՐԵԱՆ


ՔԱՅԼԵՐԳ ՊԱՏԱՆԵԱՅԻ



1. Ծածանին դրօշակ մեր, Ով Բաջ պարտիք. Կը կանչ մեր Տէրը, Օն, մի յապաղի՛ք



Մինչ ունինք կայրաւ սիրօ, Գորաւոր ջեռներ. Կաթարենք մեր պարտքը, Օն, յառաջ ի վեր:



Ծածանին դրօշակ մեր, Աստուած զօրավի՛գ. Ծածանին դրօշակ մեր, Ով Բաջ պարտիք.

հրատ

2. Կեանքն է մեր առջեւը,
Ընտրենք մեր ճամբան.
«Քրիստոս, Եկեղեցին»
Մեզ նըշանաբան:
Հաստատուն ջանքով մենք
Տանինք յաղթանակ.
Յիսուսի համար վեր
Բըռնենք մեր դրօշակ:

3. Ծածանին դրօշակ մեր,
Աշխարհ պատանիք.
Յիսուսի հաճոյ են
Անձնըւէր հողիք:
Աշխարհիս հաճոյքը,
Փառքն ու գանձ թողունք,
Յիսուսի համար միշտ
Ապրի՛նք, ո՞վ մանկունք:

4. Ծածանին դրօշակ մեր,—
Յիսուսի պէս յար
Ապրինք, ու մեռնինք ալ
Իր փառաց համար:
Յուսանք, հաւատանք թէ
Տէրն է օգնական.
Պիտ' յաղթենք մեղքին ալ,
Ինք յաղթեց մահուան:

ՎԿԱՅՈՒԹԻՒՆՍ

Պէյրութի Ա. Հայ Աւետ. Եկեղեցին մեծապէս կը գնահատէ այն բոլոր գործունէութիւնները որոնք տարիներէ ի վեր կատարուած են իր ջանասէրներուն կողմէ:

Ես անձամբ բարեբաղդ կ'զգամ իմ եկեղեցւոյս մէջ ունենալուս համար հարկէ աւելի երկսեռ ջանասէրներ որոնց եռանդը հոգւոյս, պատրաստակամ ծառայութիւնները՝ նուիրական գործիս, և յաճախ շինիչ պատգամները՝ կեանքիս նոր թափ տալու են: Անոնց երգեցողութիւնը ինծի հրճուանք, և նշխիրման ու աղօթքի ժողովները ներշնչում պատճառած են:

(ՎԵՐ.) Ե. ԿԵՕՔԿԵՕՋԵԱՆ

Ե. Ք. Զանիցի կազմութիւնը Գահրէի Հայ Աւետ. Եկեղեցիին վերածընունդի և վերակենդանութեան համազօր եղած է: Եկեղեցի մը որ երիտասարդ չէ, ուր երիտասարդութիւնը գործօն դեր մը չունի՝ զատապարտուած է մեռնելու:

Հոգիս կը հրճուի և գոհունակութեան խորունկ զգացումով կը համակուիմ երբ կը դիտեմ երիտասարդ կեանքեր որոնք իրենց երէցներէն աւելի խորունկ քրիստոնէական փորձառութեան մը տիրացած՝ կը ջանան արտայայտել զայն ինքնաբուխ ձեւերով: Քրիստոնէական փորձառութիւնը՝ աղօթող, խոկացող, ինքնամոլոր հոգիի ստեղծագործութիւնն է: Երբ երիտասարդութիւնը սկսեր է հազորդակցիլ Աստուծոյ հետ, երբ իր հոգւոյն քաղցը, և սրտին ծարաւը զգացեր է կենդանի Աստուծոյն, այն ատեն եկեղեցին կը վերածնի: Այս տեսակէտով Զանիցը մեր եկեղեցիին համար նախախնամական եղած է: Քանի մը տարի ևս՝ և ահա Գահրէի մէջ պիտի ունենանք երիտասարդ, կենսունակ և ստեղծագործ

եկեղեցի մը՝ աւետարանչական եռանդով բոցավառ:

Հոգեւոր հովիւի մը համար չկայ աւելի թանկագին վարձատրութիւն և աւելի սրտապնդիչ, վերացնող երեւոյթ՝ քան լսել արձագանգը երիտասարդութեան մէջ իր հոգւոյն խորունկ աղերսներուն: Եւ ահա այսպէս մեր Զանասէր պատանի, երիտասարդ և երիտասարդունիներուն մէջ Քրիստոնէական խորունկ գիտակցութեան հոգին նշմարել զիս թէ յուսադրած և թէ ա'լ աւելի հեզ ու խոնարհ հոգի մը ներշնչած է ինծի, խթան մ'ըլլալով լաւագոյն ոյժերս տրամադրելու եկեղեցիին շինութեան համար:

(ՎԵՐ.) Հ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ

Նոր եկած եմ Հալէպ: Երկու ամիսներու չափ է որ կը գտնուիմ Էմմանուէլ Հայ Աւետ. Եկեղեցիին մէջ՝ իրրեւ հովիւ: Ուրախութեան և քաջալերութեան պատճառներ ունիմ: Այն պատճառներէն մէկն ալ եկեղեցիին մէջ Ք. Զանից Ընկերակցութեան գոյութիւնն է: Այս կարճ ժամանակամիջոցին մէջ իմ ունեցած տեղեկութեանս համեմատ Զանիցը եկեղեցիին մէջ, եկեղեցիին համար և եկեղեցիով բաւական գործունէութիւն ունեցած է:

Մի քանի անգամներ զատ և երկսեռ ժողովներուն մէջ ներկայ գտնուեցաւ ժողովները քաջալերիչ ու յաւակից էին: Ե. Ք. Զանիցը հոգեւոր կազմակերպութիւն մըն է: Անոր նշանաբանն է «Քրիստոսի և Անոր եկեղեցւոյն համար» Մեր եկեղեցիներուն ապագան երիտասարդներէն կախում ունի: Զանիցը եկեղեցիին հանդէպ երիտասարդութիւնը տաք պահող կարեւոր միջոց մըն է: Անոր գոյութիւնը անհրաժեշտ է եկեղեցիին մէջ: Եկեղեցիին պարտականութիւնն է զայն քաջալերել եւ չխնայել պէտք եղած ժանդակութիւնը:

(ՎԵՐ.) Ս. Կ. ԱՂՊԱՊԵԱՆ

Ե. Ք. Ջ. Ընկերակցութիւնը կեանքիս ամէնէն փոթորկալից շրջանին մէջ ինծի համար խիստ փրկարար դեր մը խաղացած է: Մանկութենէս ի վեր Քրիստոնէութիւնը քիրող և ապրող մէկը ըլլալով հանդերձ՝ պատանեկան օրերուս Ազեքսանդրիոյ ապականած մըթնոլորտին մէջ կոքոսուելու վըտանգը ահաւոր էր: Այլ և այլ փորձութիւններ զիս կը հալածէին աւերածին պարտութեան կը մատնէին, սակայն Ե. Ք. Ջ. ի կիրակնօրեայ ժողովները խիղճս արթուն կը պահէին և ես չէի կրնար սանձարձակ նետուիլ մեղքի հոսանքին:

Պէտք է ըսեմ որ մեր ընկերակցութեան նախագահին և բազմաթիւ անդամներուն վերացուցիչ ազդեցութիւնը կեանքիս և նկարագրիս վրայ անջնջելի հետքեր թողուցած են: Էական է որ Ջանիցի նախագահները և պաշտօնեաները մտպնիսական գործութիւն և ամբասիր նկարագիր ունեցող անձեր ըլլան: Եթէ իր առաջնորդները բարոյական և քրիստոնէական հերթանք ըլլան՝ պատանին և երիտասարդը չեն կրնար լքել այդպիսի ընկերակցութիւն մը:

(ՊԱՏ.) Թ. ՉԱԿՄԱԿՃԵԱՆ

Ութը տարի առաջ անգամակցեցայ այս ընկերակցութեան: Այս տարիներու ընթացքին Ջանիցի Ընկերակցութիւնը կը թափախար մը եղած է ինծի համար ուսուցանելով ոչ թէ գիտութիւն այլ կեանքի և կրօնքի վերաբերեալ կարեւոր հարցեր: Պատեհութիւն տուած է ինծի գործածելու և զարգացնելու իմ տկար ձիրքերս և անոնց քող և շինիչ ուղղութիւն մը տալու: Հոն գտած եմ ընկերային մաքուր և առողջ միջավայր և հոն սորված եմ ընկերասիրութեան, ժողովալուծեան և շրջանկատութեան ամենապատուական դասերը: Պատանեկութեան և երիտասարդութեան փո-

թորկալից շրջանին ան ինծի մատնանշած է այն միակ կատարեալ Անձը որ կարող և արժանի է երիտասարդի մը առաջնորդը ըլլալու: Հոն սորված եմ թէ ինչ կը նշանակէ եկեղեցին, ինչ է անոր դերը երիտասարդութեան մէջ, ինչ պէտք է ըլլայ ճշմարիտ փոխադարձ յարաբերութիւնը երիտասարդներու և եկեղեցիի միջեւ և ինչ կը նշանակէ օգնել և ծառայել եկեղեցիին: Վերջապէս ան տուած է ինծի հետեւեալ նշանարանը: «Քրիստոս այնպիսի Անձ մըն է և եկեղեցին այնպիսի հաստատութիւն մը որ կ'արժէ իսկապէս ծառայել անոնց և ի հարկին զոհուիլ անոնց սիրոյն»:

Ե. Ս. ԹՈՎՄԱՍԵԱՆ

1. Ան գործունէութեան մեծ ասպարէզ մը բացաւ իմ առջեւ՝ չմիայն մէջ զնեւելով զիս երիտասարդութեան հետ: Ջանիցի շնորհիւ է որ ես հանդիպեցայ ինձմէ աւելի Քրիստոնէական փորձառութիւն ունեցողներուն, որոնց կեանքերէն և խօսքերէն մեծապէս օգտուեցայ: Նաեւ Ջանիցին էր որ ինծի ասպարէզ տուաւ մասնակից ընելու իմ ընկերներս այն հոգեւոր և մտաւոր վայելքներու զոր ես ունէի, պարտականութեան զգացումն ալ դրօշմեց իմ վրաս:

2. Ջանիցի մէջ սորվեցայ ես թէ ինչ կը նշանակէ պատասխանատուութիւն, ինծի համար այդ բառը խորշելի բան մը չէ, այլ ասոր մէջ կը կայանայ յաջողութեան գաղտնիքը: Որչափ որ կրնաս պատասխանատուութիւն ստանձնել և կատարել, այնչափ մեծ մարդ ես դառն: Ես այս գաղտնիքը, և պատասխանատու ըլլալու վարժութիւնս ունեցայ Ե. Ք. Ջանիցի մէջ:

3. Ջանիցի մէջ էր որ վարժութիւնը ունեցայ իմ գաղափարներս արտայայտելու: Ինչպէս որ այսօր կրնամ խօսիլ բեմէ մը, կը պարտիմ Ե. Ք. Ջանիցին

որ համբերութեամբ կրթեց զիս ինք-
զինքս արտայայտելու արուեստին մէջ:
Մ. Յ. ՇՆՈՐՀՕՔԵԱՆ

Հոգեւոր արթնութեան մը ժամանակ
նոր կեանքի սկսած պատանիներ էինք
ամէնս ալ, թիւով 15 հոգի, երազկոտ և
վառվառ: Իրար կը սիրէինք ջերմո-
րէն, իրարու օգնելու, իրարու թերու-
թիւնները շտկելու կ'աշխատէինք անկեղ-
ծաբար: Իրարու ցաւով կը տառապէինք
և ուրախութեամբ կը հրճուէինք: Ա-
մէն կիրակի կը հաւաքուէինք սենեակի

մը մէջ կ'երգէինք, կ'աղօթէինք ու կը
խօսակցէինք, և բոլոր շաբաթ կ'ապ-
րէինք ու կը դորձէինք այդ ժողովի
ներշնչումով: Անցան այն օրերը, այդ
թանկագին սենեակը ալ չկայ, ընկեր-
ներէս ոմանք իրենց յաւիտենական հան-
գիստին մտած և ուրիշներ ամէն կողմ
ցրուած են, սակայն այդ ընկերակցու-
թեան սուրբ յիշատակը և իմ վրաս ձգած
յաւիտենական ազդեցութիւնները միշտ
իմս են: Այս էր իմ Զանիցը, իմ հին՝
սիրելի Զանիցը: Միշտ երախտապարտ
եմ այդ ընկերակցութեան: Մ. Պ.

ԻՆՉ ԿՐՆԱՆՔ ԸՆԵԼ

Կրնանք երիտասարդացնել մեր եկեղեցիները:

Պարզ ճակատ, ժպտուն դէմք, կայ-
սառ շարժումներ, անկեղծ վերաբե-
րում, ճշմարտութեան բաց միտք, յա-
ռաջդիմելու փափաք, ապագայի մա-
սին երազներ, պարտականութիւններ
կատարելու մասին նախանձախնդրու-
թիւն, դժուար գործեր զուլիս հանելու
նախաձեռնարկ ոգի, մեծաբաղձութիւն,
ահաւատիկ երիտասարդը: Կքած և ընկ-
ճուած երեւոյթ, խորշումած ճակատ,
դանդաղ շարժումներ, հռանդի պակաս-
ութիւն, պարտականութիւն ստանձ-
նելու մէջ երկչոտութիւն, անցեալով
ապրել, «ինչո՞ւ» պէտք, չկոտրած տեղը
թող մնայ» ըսել, ահաւատիկ ծերը:

Անհատներու նման՝ ընկերութիւն-
ներ և եկեղեցիներ ալ կրնան երիտասարդ
կամ ծեր ըլլալ: Տես սա եկեղեցին,
պաշտամունքի ժամանակ է, բայց հա-
զիւ 5—10 հոգի ներկայ է. գրեթէ բո-
լոր պաշտամունքի ընթացքին դանդաղ
քայլերով եկողներ կ'ըլլան: Երգե-
ցողութեան քիչեր կը մասնակցին և
կ'երգեն ծանր և անհոգի: Քարոզի ժա-

մանակ անտարբեր երեւոյթ մ'ունին
և նայն իսկ ոմանք կը մրափեն, եթէ
պաշտամունքի մէկ մասը յօտնկայս ը-
նել առաջարկուի դէմքերու վրայ դրժ-
գոհութեան նշաններ երեւան կ'ուզան:
Կարծես ըսել կ'ուզեն. «Ի՞նչ պէտք ին-
չո՞ւ խանդարել մեր հանգիստը»: Աղօ-
թած ժողովներուն շատ քիչեր ներկայ
կ'ըլլան և որոշ մարդիկ միայն կ'աղօ-
թեն: Եկեղեցիին բոլոր գործը հովիւին
ձգուած է, ոչ ոք անոր մօտենալով իրեն
օգնելու պատրաստակամութիւն կը
ցուցնէ, սակայն վիճաբանիլ շատ կը
սիրեն, հին սովորութիւնները և մտայ-
նութիւնները պահպանելու շատ նա-
խանձախնդիր են: Ծերացած եկեղեցի
մըն է այն: Յաւալի է որ մեր բոլոր ե-
կեղեցիներն ալ ծերութեան նշաններ
կը ցուցնեն աւելի կամ պակաս չա-
փով:

Արդեօք կարելի՞ է մեր եկեղեցիները
երիտասարդացնել: Այո՛, անշուշտ:
Ի՞նչ պիտի ընէ այս գործը: Մենք երի-
տասարդ ջանասէրներ:

Սբ. Գիրք և երգարանն իս մեր ձեռ-

քը՝ ճիշտ ժամանակին առջեւի նստա-
րանները գրաւենք: Բողոքաշատմուն-
քի ընթացքին՝—եւլիլ, նստիլ, քարո-
զին մտիկ ընել—յարգալիբ եռանդ և
հետաքրքրութիւն ցուցնենք, աղօթա-
ժողովներուն անպատճառ ներկայ ըլ-
լանք և մասնակցինք, բեմը ծաղիկնե-
րով զարդարենք, երգիչ խումբեր կ'ազ-
մենք, կիրակնօրեայ դպրացիք մէջ աշ-
խատինք: Երբեմն հովիւին այցելելով
հարցնենք թէ ինչպէ՞ս կրնանք իրեն
օգնել և թեթեւցնել անոր բեռը: Այս
և ասոր նման կերպերով կրնանք մեր
եկեղեցիները երիտասարդացնել: Ա-
հա պարտականութիւննիս՝ կատարենք
զայն:

Կրնանք ճշդապահութիւն սորվիլ և սոր-
վեցնել:

«Արեւելեան ճշդապահութիւն» ըս-
ուած բան մը կայ որ զգուելի է և որ կը
նշանակէ ժողովներուն աւշանալ, խոս-
տանալու չի կատարել, տոմսին վրայ
ժամը 7:30 նշանակել և Յին հանդէսը
սկսիլ: Ախտ մըն է առիկա որմէ վարակ-
ուած ենք ամէնքս: «Արեւելեցիք չի
գիտեր թէ ճշդապահութիւն ինչ է» ըսաւ
Անգլիացի մը, օր մը շատ իրաւամբ:
Ո՞ր պիտի բռնէ այս ախտը և սրբէ
այս արատը: Մենք, մենք երիտա-
սարդներս: Եկէ՛ք, մենք մեր շրջանակ-
ներուն մէջ ցուցնենք կատարեալ ճշ-
դապահութիւն: Մեր ընկերակցութեան
և եկեղեցիին վերաբերեալ գործերուն
մէջ ըլլանք ճշդապահ: Սորվինք և սոր-
վեցնենք զայն ութիշներուն:

Կրնանք գործակցութեան ոգին փառալերել:

«Մրցում», այս էր անցեալ սե-
րունդներուն նշանաբանը: Մրցումի
ոգին կը ներշնչուէր եկեղեցիի և ընկե-
րութեան շրջանակներուն մէջ: Կը կար-
ծուէր թէ մրցումն է յառաջդիմութեան
միակ մղիչ ոյժը: Սակայն վերջերս
մարդկութիւնը նոր գիւտ մ'ըբաւ: Նա
գտաւ որ գործակցութիւնը աւելի կա-

րեւոր է քան մրցումը: Եւ այսօր դպրո-
ցը աւելի կը քաջալերէ գործակցու-
թիւնը քան մրցակցութիւնը: մեծ ձեռ-
նարկները ոչ թէ մրցելու ոգիով այլ
գործակցութեամբ գլուխ կը հանուին:

Սուրբից մէջ գտնուող Զանիցները
դէպի գործակցութիւն քայլեր առին,
գործը սկսան, բայց տակաւին չկըր-
ցան զայն արժեցնել: Ժամանակ է որ
գործակցութեան ոգիով իրարու ձեռք
երկարենք և մեր բոլոր ոյժը Յիսուս
Քրիստոսի գատին համար ի սպաս դը-
նենք:

Կրնանք տալ և ստանալ վարձեցնել:

Մեր եկեղեցիները, դպրոցները,
բարենպատակ ընկերակցութիւնները,
հիւանդանոցները, աղքատախնամնե-
րը, անկեղանոցները և աւետարանչա-
կան գործունէութիւնները կամաւոր
նուէրներով կ'ապրին: Ուստի պէտք է
տալ: Բայց ո՞ր պիտի տայ: «Հարուստ-
ները թող տան» կ'ըսեն ոմանք: «Ամէն
մարդ կարողութեան չափով թող տայ»
կ'ըսէ ուրիշ մը անշուշտ միշտ ինքզին-
քը տարիշներու հետ բաղդատելով և
տալու տնկարող գտնելով: Ուրիշներ
թող տան, բայց ես՝ ոչ: Այս է շատե-
րուն դիրքը և ահա թէ ինչո՞ւ համար
մեր գործերը կը կաղտն:

Անգամ մը երեք ֆրանքնոց գեղեցիկ
գրքոյկ մը զրկուեցաւ ընտանիքի մը:
Տան տիկինը ակամայ ընդունեց գրքոյ-
կը ըսելով, «Բիչ մը մեզ այս ցանկէն
դուրս ձգէին չէ՞ր ըլլար»: Ուրիշ ան-
գամ մը գրադարանի մը համար հանգա-
նակութիւն կ'ըլլար, և մէկու մը դիմում
կատարուեցաւ ըսելով. «Պարոն, այսօգ-
տակար ձեռնարկին համար ձեր նիւթա-
կան և բարոյական աջակցութեան պէտք
ունինք»: «Շատ լաւ», ըսաւ մարդը,
կէս մը կատակելով, «զիս այդ բարո-
յական աջակցողներու ցանկին մէջ գրե-
ցէք ազաճնուող չափ՝ շատ»:

Ահա մտայնութիւնը մեր մէջ, «Այդ

յանկէն, տուեղներու ցանկին մէջ չըլլալ, կամ հեռուէն դիտելով բարոյապէս աջակցիլ միայն:

Ջանաթերնե՛ր, ժամանակ է որ այս ախտաւոր, հին մտայնութեան դէմ պայքարինք, ընդունելով մեզի համար նոր սկզբունք մը, այն է «Տա՛լ, մեր կրքածին առաւելագոյնը տալ, Աստուծոյ փոխ տալու պէ՛տ տալ»: Մ. Պ.

Աշխարհ ճգնաժամային ըոպէներ կ'անցնէ: Պատմութեան մէջ եղած է ժամանակ մը որ ան այսքան շփոթութեանց մատնուած ըլլայ: Սա իրականութիւն մըն է նաև եկեղեցիին համար որ աշխարհիս նման տագնապի մը ենթարկուած է:

Աշխարհ հիւանդ է: Նա բուժումի կը կարօտի. նա պէտք ունի իսկական առաջնորդներու, արդարութեան ռահ-վիրաներու, աւելի ճիշդը Քրիստոսի և Անոր Աւետարանին ստոր սկզբունքներուն իրագործման: Անով է որ աշխարհ պիտի պրծի այս անել կացութենէն:

Եկեղեցին ալ տկարացած է և հիւանդութեան նշաններ կը ցուցնէ, նա անմիջական դարմանումի մը, հոգեւոր զարթոնքի կը կարօտի: Անոր երակներուն պէտք է թարմ արիւն ներմուծուի, լոյս պէտք է որ անոր փտտած ուկորները առողջանան, այդ արիւնը պիտի դառնայ այդ լոյսը պիտի ցլանայ զիտակից երիտասարդութենէ մը: Եկեղեցին կը կարօտի երիտասարդ տյօներու, երիտասարդ դէմքերու, երիտասարդական աշխոյժ ունեցող հոգիներու, համագործակցութեան ոգիին տիրացած, Քրիստոսի օրով և նուիրման ոգիով վառուած, աշխարհային հասանքներու զիմազըող երիտասարդութեան մը:

Մենք որ այսօրուան եկեղեցիին երիտասարդութիւնը՝ կը կազմենք, վաղուան եկեղեցիին միակ ժառանգորդներն

ենք, մենք պիտի ըլլանք անոր անդամները և առաջնորդները, մենք պիտի կազմենք քրիստոնէական խաչակրութեան ներկայ և ապագայ բանակները նուիրուած Անոր սուրբ դատին: Սակայն եթէ ներկայիս վեհ իտէալներով տագորուած գործի ասպարէզ չենք իջած, ի՞նչ պիտի կրնանք ընել ապագային, եթէ ներկայիս չմաքառինք դարուս հոսանքներուն դէմ, ապագային դառն պարտութիւն մը մեզի կ'սպասէ:

Յաճախ մեր երէցներէն կը լսենք քրիստոնէական միութեան և անոր անհրաժեշտութեան մասին, նոյնպէս եկեղեցիներու փոխարարներութիւններուն բարեւաւման մասին: Սակայն հին մտայնութիւն ըսուած բան մը կայ որը ասոր արգելք կը հանդիսանայ: Ուստի եթէ պիտի ըլլայ քրիստոնէական միութիւն մը, եթէ եկեղեցիներու ներկայ քառասային վիճակէն դուրս պիտի գայ Քրիստոսի մէջ միացեալ եկեղեցի մը, այդ պիտի ըլլայ մեզմով: Մենք պէտք է լրջօրէն և անմիջապէս սկսինք զայն ի գործ դնելու:

Կ'ըսուի թէ արդի երիտասարդութիւնը անտարբեր է եկեղեցիին հանդէպ, որուն հետեւանքն ըլլալով մէկ կողմ կայ եկեղեցին՝ զուրկ Քրիստոսով ինքնագիտակից երիտասարդութենէ մը, ողբալի վիճակ. անդին կայ երիտասարդներու բանակ մը, որ լոյսը կ'անարգէ և մութին մէջ կը խարխափի, աւելի ողբալի վիճակ: Պէտք է մութը փարատի և անոնք վերադարձուն եկեղեցւոյ գիրկը:

Ահաւասիկ հարցեր որոնք մեզ կը զիմազրաւեն ներկայիս: Ահա՛ մեր պարտականութիւնները: Եկեղեցին և մոլորած երիտասարդութիւնը ուղղակի Ջանիցի օժանդակութեան կը կարօտին: Քրիստոսով սնած երիտասարդութիւն մը պէտք է գործող ոյժ մը դառնայ եկեղեցիին մէջ: Եւ ահա ճիշդ այն ատեն

ՊԱՅՔԱՐԻՆՔ ԱԼՔՈԼԻ ԵՒ ԾԽԱԽՈՏԻ ԴԵՄ

ԱԼՔՈԼ

Ալքոլի հարցը թէ՛ առողջապահական տեսակետէն և թէ՛ բարոյական տեսակետէն Նոյ Նահապետի օրերէն ի վեր աշխարհիս ամենակարեւոր հարցերէն մին եղած է։ Ալքոլը բնութեան միջոցաւ պատրաստուելու համար, մարդիկ զայն իբրեւ քիմիական մի բաղադրութիւն հնարելու համար նեղութիւն մը չեն ունեցած, զայն բնութեան մէջ գտած և գործածած են։ Ուէ մի տեսակ ջուրով խառնուած շաքարի մէջը ամէն տեղ գտնուող խմորման մանրէները եթէ մուտ գտնեն, հոն մանրէական գործունէութիւնը կ'սկսի և շաքարը տարրալուծելով ածխային թթու, ալքոլի եւ ջուրի կը վերածուի։ Ալքոլը վերջին տարիներու ընթացքին փայտէ և ծառերու թափած տերեւներէն ալ մեծ քանակութեամբ կը հանուի։

Ալքոլի արուեստներու մէջ ունե-

հոգեւոր զարթոնքը պիտի ծնի։

Օ'ն ուրեմն, եղբայր. տուր քու ձեռքդ, ընտրենք Բրիտոսոս մեզի օրինակ, իբր խաչակիր զինուորներ արձանագրուինք անոր խաչակրութեան։ Միանանք և միացնենք եկեղեցիները, սիրենք և սիրցնենք զայն, տանք և տալ սորվեցնենք։ Չըսենք թէ եկեղեցին մեզ չի հրապուրեր, այլ մենք անոր մէջ մտնենք և զայն հրապուրիչ դարձնենք։ Հիմա է առիթը գործելու և գործակցելու։ Հիմա է ամենամեծ պատեհութիւնը մեզի համար դուրս հանելու և օգտագործելու մեր հոչակ հանած թագուն ոյժերը։

Օ'ն ուրեմն, Բրիտոսոս մեզ կը կանչէ նետուինք գործի դաշտին մէջ։

ԲԻԻԶԱՆԴ ԳԱԼՅԱՆԱՆ

ցած օգտակարութիւնը անուրանալի է։ ջուրի մէջ չհալող շատ մը նիւթեր կան որ ալքոլի մէջ դիւրութեամբ կը հալին, այս յատկութիւնը զայն բժշկութեան մէջ շատ օգտակար ըրած է, շատ մը բոյսերու պարունակած դարմանները այս կերպով, ալքոլի միջոցաւ կը հանուին ու օգտակար կերպով կը գործածուին։

Ալքոլի հակաանխիչ յատկութիւնը զայն արդէն թանկագին հեղուկներու կարգը դրած է, նոյնպէս անոր շատ դիւրութեամբ ցնդելու յատկութիւնը զայն անուշահոտութեան գործարաններու մէջ և ուրիշ շատ մը արուեստներու շատ օգտակար ըրած է։

Մենք ալքոլի հետ բարոյական տեսակետէն ալ աւելի կը հետաքրքրուինք։ Անուրանալի է որ ալքոլը շատ քանակութեամբ եթէ խմուի մարդուս հաճոյք մը կը պատճառէ։ Բայց հոս հոգեբանական աշխարհի մէջ ընդունուած կանոն մը կայ զոր պարտինք կրկնել։ «Այն բաները որ հաճոյք կը պատճառեն միշտ օգտակար չեն»։ Ահաւսիկ ալքոլը այս գասակարգին կը պատկանի, անիկա մարդուս հաճոյք կրնայ պատճառել բայց անիկա ոչ թէ միայն օգտակար չէ այլ վնասակար է։ Ալքոլի հաճոյք պատճառելն է որ զայն աւելի վտանգաւոր հեղուկ մը ըրած է։

Իրողութիւն մ'է որ ալքոլը թունաւոր հեղուկներու կարգին կը պատկանի։ անիկա որոշ և պզտիկ չափերով իբրեւ դեղ կարգ մը հիւանդութեանց իր օգտակարութիւնը ունի, բայց երբ անիկա հաճոյքի համար մեծ քանակութեամբ խմուի մարդուս մարմնոյն բոլոր բջիջները կը թունաւորէ և անոնց գործունէութիւնը կը խանգարէ։

Այս կրնայ յառաջ բերել 1. Լեւաբղի

(գարածիւն) կարծրացում և կծկում:
 2. Երկկամուռներու հիւանդութիւն:
 3. Երակներու պնդացում: 4. Կաթ-
 ուած և տնդամալութիւն որոնք աւ-
 դեղի մէջ եղող երակներու մէկուն պայ-
 թելէն յառաջ կազան: Ջղային դրու-
 թեան խանգարում և մտային հիւան-
 դութիւններ: 6. Մարմնի ընդհանուր
 տկարութիւն որով ան չի կրնար ինք-
 զինք պաշտպանել թաքտապի և թո-
 քախտինման հիւանդութեանց դէմ, ևն:

Աւքոլի փնասակտր մի յատկու-
 թիւնն ալ այն է որ անիկա խմողին
 մէջ սովորութիւն մը յառաջ կը բերէ:
 Ունէ անհատ մը զայն տարիներով գոր-
 ծածելով սովորութիւն հաստատելէ յե-
 տոյ զայն չի կրնար ձգել և այս ամե-
 նօրեայ թունաւորումը կը շարունակէ
 իր աւերները գործել:

Աւքոլի վերաբերող ուրիշ շատ
 կարեւոր կէտ մը այն է որ՝ անիկա ինչ-
 պէս որ մարմնոյն թերիշ բլիշները կը
 թունաւորէ նոյն կերպով մարդուս նա-
 խաբլիշները (ծուերը) կը թունաւորէ,
 հետեւաբար գինեմալ անհատի մը թու-
 նաւորումը նախաբլիշները առողջ և
 բնականոն սերունդներ արտադրելու
 անկարող վիճակի մը կը վերածուին:
 Ահաւասիկ այս կերպով աւքոլը ոչ թէ
 մինակ անհատը այլ միանգամայն ա-
 պագայ սերունդներն ալ թունաւորելով
 ցեղի տոհմային ազնուութեան մակար-
 դակը իջեցնող հեղուկ մը կ'ըլլայ: Ոճ-
 րագործութեանց, անբարոյականութեան
 աւ վատասեմքներու մեծամասնութիւ-
 նը աւքոլի ազդեցութեան տակ տեղի
 ունենալը վիճակագրութիւններով հաս-
 տատուած իրականութիւն մըն է:

Ժառանգական կարգ մը ուրիշ յոռի
 յատկութիւններ ունեցող անհատներ են
 որ ընդհանրապէս գինեմոլութեան վը-
 տանքին մէջ գիւրաւ կ'իյնան. ուստի
 գինեմոլութիւնը յաճախ իրեն հետ հա-
 մընթաց քալող ուրիշ յոռի միտումներու

հետ միասին կը գտնուի: Այս եղելու-
 թեանց վերահասու ըլլալով էր Թր Ամե-
 րիկան և Իսլանտան գինարգելութիւնը
 ի գործ դնելու համարձակեցան:

Ուստի մեր Զանից եւ պատանեաց
 ընկերակցութիւններուն սուրբ պար-
 տականութիւնն է Թր մեր նոր սերունդը
 ամէն կերպով այս ապականութեան
 դէմ զգուշացնեն որպէսզի ապագայ սե-
 րունդները չվատասերին:

Հայկա

ՏՈՒՅԺ. Ա. ՃԵՊԵՃԵԱՆ

ԱԼԻՈԼԸ ՏՈՒՆԵՐ ԿԸ ՔԱՆԴԷ

Աւքոլի պատճառաւ քանդուած տու-
 ներու, մարած օճախներու, սպառած
 հարստութեան, երիտասարդ հասակի մէջ
 ծերացած մարմիններու, փճացած տա-
 ղանդներու հաշիւը ո՞վ կրնայ տալ:

Կը ճանչնամ այնպիսիներ որոնք օղիի
 պատճառաւ մուրացկան դարձան, ոճի-
 ներ գործելով բանտ նետուեցան, հիւան-
 դացան և ժամանակէն առաջ գերեզման
 իջան: Գիտեմ նաև ամբողջ ընտանիք-
 ներ որոնք հօրը գինեմոլութեան երեսէն
 տանջուեցան և թշուառացան:

Երեսունհինգ քառասուն տարեկան
 վարպետ արհեստաւոր մը կը ճանչնամ
 որ տասնը հինգ տարի առաջ խմելու
 սկսաւ ու կարճ ժամանակի մէջ գինեմոլ
 մը դարձաւ և իր բոլոր վաստակը մինչեւ
 կէս գիշեր գինեմոլներու մէջ կը վատ-
 նէր: Վերջապէս վաստակը պակսեցաւ
 և գինեմոլներու պարտքը շատցաւ,
 նոյն ատեն մարմինը մաշեցաւ, մանա-
 ւանդ լեարդը և երկկամուռքը հիւանդա-
 ցան, միտքը տկարացաւ և կէս խենդ
 վիճակ մը ստացաւ: Խեղճ տիկինը գի-
 շեր ու ցորեկ ասեղնագործութիւն ընե-
 լով տան ապրուստը հոգալու և ամուս-
 նոյն պարտքերը վճարելու սկսաւ:

Օր մը կէս գիշերէն ետք ձայն մը լը-
 սեցինք, «Հասէ՛ք, օգնութի՛ւն, օգնու-

թիւնն Գացինք և ի՞նչ տեսներք: Մեր դրացի գինեմուլը դանակը քաշած իր անձնուէր կիներ սպաննելու վրայ էր: Հագիւ կրցանք ազատել խեղճ կիներ: Եւ ի՞նչ էր խնդիրը: Կէս գիշերին՝ պահապանը դուռը զարնելով իմաց կուտայ որ մարդը գինեմուլցած շուկայի մէջ պառկած է: Կիներ այդ մուկ գիշերին կ'երթայ ու կը գտնէ իր անարժան ամուսինը փողոցը՝ իր փոխրտուքին մէջ տապալկած, կօշիկին մէկը, ժամացոյցը, գօտին, գըլխարկը և դրամապնակը կորսուած: Խեղճ կիներ իր գինեմուլցած ամուսինը հազար չարչարանքով կը բերէ տուն: Կը լուայ անոր վրան գլուխը: Քիչ յետոյ պարոնը կ'սթափի, կերակուր կ'ուզէ և իր առջեւ կը դրուի պնակի մը մէջ պակլա ապուր և պնակ մըն ալ մածուն: Պարոնը առաջին դգալը հազիւ բերանը դրած, «Աղի է» կը պոռայ և ամաններէն մէկը այս պատիճն միւսը այն պատին զարնելով կը փշուէ, կերակուրը և մածունը կը թափուի անկողինն հերոսն վըրայ, ու ասով ալ չգոհանալով այս մեծ յանցանքին համար իր անձնուէր կիներ մեռցնելու կ'ելլէ:

Օղին մարդկութեան մեծագոյն թըշնամին է, պայքարեցէ՛ք անոր դէմ:

ԹՈՎ ՀԱՆՆԷՍ ՇՆՈՐ ՀՕՔԵԱՆ

ՎԱԽՃԱՆԸ

Հայրենակից էինք անոր հետ: Դըպրոցական օրերուն շատ ուշիմ և խելացի ուսանող մըն էր: Վիրաբոյժ բժիշկ մ'ըլլալու ամէն կտրողութիւններով և ձիրքերով օժտուած էր: Մարմնով առողջ էր: Ամուսնացաւ պատուաւոր ընտանիքէ, շատ բարձր ուսում առած, կրթեալ և քրիստոնեայ օրիորդի մը հետ: Եւ շատ երջանիկ կը կարծուէին:

Տարիներ հոգը, ռւբիշ երկրի մը մէջ իրարու հանդիպեցանք, նոյն չէն-

քին մէջ սենեակ մը վարձելով դրացի եղանք: Բայց ինչ զարմանք որ, այդ քաղաքավար, բարեկիրթ, գուլճական երիտասարդը գինեմուլ մը դարձած էր: Ամէն օր 200 տրամնոց շիշ մը օղի կը խմէր, աւ երբոր կը խմէր կը խենդանար, և ինքզինքը կը կորսնցնէր: Ճաւախին այն է որ նա օր ըստ օրէ աւելի գերի կը դառնար թունաւոր հեղուկին:

Օր մը իրիկուան դէմ գինեմուլցած վիճակով, իր 1—1.5 տարեկան հրեշտականման պղտիկը գիրկն էր: Եւ ահա սրահէն դուրս վազեց՝ ու բարկութեամբ լեցուած՝ փաքրիկը պատշգամէն վար նետել կ'ուզէր: Վազեցինք եւ օհ ի՞նչ տոսկում, փոքրիկը գինեմուլին ձեռքերուն մէջ վայրկեան մը եւս, եւ ահա փողոցին մէջ անշնչացած պիտի ըլլար այդ պղտիկ հրեշտակը զոր մենք դժուարաւ կրցանք ազատել:

Բարեպաշտ եւ ազնիւ տիկինը լալով կ'աղօթէր իր թշուառ ամուսնին համար, ամէն օր տաք արցունքներ թափելով կ'աղերսէր և կը պաղատէր օր ա'լ հըրաժեշտ տայ օղիին: Բայց անօգուտ էր:

Տարիներ վերջը նորէն հանդիպեցայ տիկնոջը իր երեք որբուկներով, հետաքրքրութեամբ շատ մը հարցումներ ուղղեցի և հասկցայ ողբերգութիւնը: Մարդը երթալով աւելի սոսկալի գինեմուլ մը դարձած էր, եւ իր վերաբերումը աւելի անգութ եղած էր: Տան մէջ ծեծ, կըռիւ, սպառնալիք, լաց եւ ողբ օտակալի համեմատութիւններ առած էին: Օր մը այնպէս հարուածած էր խեղճ տիկինը որ անոր աչքը գրեթէ կուրցուցած էր: Ասոր վրայ անոր մայրը յանկարծամահ եղած էր: Վերջապէս խեղճ կիներ անկէ բոլոր յոյսը կտրելով կառավարութեան միջամտութեամբ ամուսնալուծում ձեռք բերած և զինք ձգելով Սուրիա եկած էր, իսկ մարդը, ժամանակ մը փողոցներու մէջ իր թշուառ գոյութիւնը քաշքշած և վերջապէս իր օր-

ԳԻՏՈՒԹԵԱՆ ԽՕՍՔԸ ԾԽԱԽՈՏԻ ՄԱՍԻՆ

1. Ծխախոտը կը պարունակէ Նիֆօթին կոչուած թոյն մը (1—80/0 համեմատութեամբ) որուն մէկ բաղադրութիւնը կը գործածուի միջատներ մեղցնելու:

2. Մեծնալու տարիքին մէջ եղող (մինչեւ 18) պատանիներ եթէ ծխեն՝ չեն կրնար պէտք եղածին չափ (ա) մարմնով մեծնալ (բ) մտքով զարգանալ:

3. Կը թուլցնէ մասնները: (ա) Ծխող մէկը չի կրնար ընել այնքան գործ որքան պիտի կրնար ընել եթէ չէր ծխեր: (բ) Մրցումի և մագլցելու նման մարմնամարզանքի անկարող կը դառնան:

4. Ջղային դրութիւնը սաստիկ կ'ազդուի, որով՝
(ա) Չի կրնար մասնները կառավարել, ձեռքը կը դողդոջայ: Խիստ նուրբ և ուշադրութիւն պահանջող գործերու մէջ ծխողները ենթակայ են սխալելու:
(բ) Ջղային և անհանդարտ կ'ըլլան:

Բերիներուն ածուները կաշիներով փողոցներուն մէջ մեռած էր:

Մեռած էր այդ յուսալից երիտասարդը: Փճացած էին այդ հազուագիւտ տաղանդները: Բայց ե՞րբ սկսած էր նա խմելու, առաջին բաժակը ե՞րբ դրած էր իր շրթունքներուն վրայ: Ուսանողութեան ժամանակ:

Որո՞ւն է վայը, որո՞ւն է տէր, որո՞ւն են կռիւները, որո՞ւն են տրտուշները, որո՞ւն են առանց պատճառի վէրքերը, որո՞ւն է աչքերու կարմրութիւնը: Գինին քով մնացողներուն, խառնած գինին փնտռելու գացողներուն: Մի՞ նայիր գինին կարմրութեանը, գաւաթին մէջ իր գոյնը ցուցնելուն ու շիտակ վազելուն: անիկա ետքը օձի պէս կը խածնէ և քարբի պէս կը խայթէ: Առակ. 23. 29-32:

ԽՄԱՍՏՈՒՆԸ

(Գ) Չեն կրնար շուտ սորվիլ, դասերու մէջ միշտ ետ կ'ըլլան, միտքերնին յետակ չ'ըլլար:

(Դ) Չեն կրնար ուշադրութիւննին կեդրոնացնել:

5. Ծխելու ունակութեան ենթակայ եղողներ առ հասարակ կամքի տկարութիւն կ'ունենան, իրենց մեծաբաղձութիւնը (ambition) կը կորսնցնեն:

6. Տեսողութեան Զիդերը ազդուելով տեսակ մը կուրութիւն յառաջ կուգայ որ կրնայ բուժուիլ ծխելը ձգելով:

7. Դժուարամարտութիւն և ստամոքսի խանգարում կը պատճառէ:

8. Արեան ճնշումը կ'աւելցնէ, պընդերակութիւն և սրտի հիւանդութիւն կը պատճառէ:

9. Նիքթիկ շարունակական ներմուծումը արեան գնդիկներուն վրայ ազդելով կը պատճառէ գունատութիւն և արեան խանգարում, որուն հետեւանքը ըլլալով հիւանդը օր ըստ օրէ կը տկարանայ, կերակուրի ասորժակը կը կորսնցնէ, կը հազայ և երբեմն արիւն կը թքայ: Ատոնք ընդհանուր առումով մարմնոյ թունաւորման նշաններ են:

10. Կոկորդային քաղցկեղ կը պատճառէ:

11. Ընդհանուր առմամբ բոլոր մարմինը կը տկարանայ:

Վերոյիշեալ կէտերը անասուններու և մարդոց վրայ կատարուած հազարաւոր փորձերով հաստատուած ճշմարտութիւններ են:

(ՏՈՒԹ.) Ա. ԱՊՈՒՀԱՅԱԹԵԱՆ

ՎԱԹՍՈՒՆ ՄԷԿ ՏԱՐԻ ԾԽԵԼԷ ԵՏՔ

Մահկութեանս ժամանակ յաճախ սոսոտիկ խիթ կ'ունենայի, այս պատճառաւ՝ տասնը երեք տարեկան հաս-

կիւմէջ ծխախոտ գործածելու, սկսայ
և վաթսուս մէկ տարի անդադար ծխե-
ցի: Այն աստիճան ծխելու գերին դար-
ձած էր որ հինգ վեց սիկար իրարու ե-
տեւէ վառելով կը ծխէի, կը ծխէի մին-
չեւ որ բերանս աղտոտ ամանի պէս ըլ-
լար: Անցեալ տարի՝ Յուլիսին ինք-
նիրենս եկայ և որոշեցի ձգել իմ այս
հին բարեկամս (ամենամիծ թշնամիս):
«Արիւնդ ատով շաղուած է, մի՛ ձգեր,
կը ֆլաւսուի», ըսին բարեկամներ: ու-
րիշներ, «Սիրոյս համար այս մէկ սիկա-
րը ծխէ», ըսելով զիս փորձութեան բե-
րին, բայց Աստուծոյ օգնութեամբ ու-
րոշումիս վրայ հաստատ մնացի և անոր
գերութենէն ազատեցայ:

Ծխելը ձգելով ի՞նչ շահեցայ:

1.—Կ'զգամ թէ շիտակ բան մը ը-
րած եմ և հետեւաբար շատ ուրախ եմ:

2.— Շաքարական առնուազն 30
դրշ. սուրի քսակս կը մնայ, որով տու-
րիշներուն բեռ չեմ ըլլար այս ծերու-
թեանս մէջ:

3.— Գիշեր ու ցորեկ զիս անհան-
հանգիստ ընող հագէն ազատեցայ:

4.— Առաջ՝ մինչեւ կէսօր բան մը
չէի կրկար ուտել, յաճախ զլիւս պտոյտ
կ'ուէնեայի, իսկ հիմա, ախորժակս
բացուեցաւ և կերածս կը մարսեմ:

5.— Քթիս տակը, պիսիքս ծխե-
լոյծի պէս աղտոտ և գեղնած էին, իսկ
հիմա, ճերմակ և մաքուր են:

6. Առաջ չէի կրնար մարդոց քովը
նստելով խօսակցել, որովհետեւ շունչս
կը հոտէր սոսկալիօրէն, մինչ հիմա բե-
րանս մաքրուեցաւ ու շնչառութիւնս
զիւրացաւ, փա՛ռք թող ըլլայ զիս փըր-
կողին:

Երիտասարդ զաւակներս, ծխախո-
տէն փախէ՛ք ինչպէս օձէն, և ինծի պէս
ծխախոտի գերի եղողներ, կը յանձնա-
րարեմ որ Աստուծոյ վստահելով հրա-
ժեշտ տաք անոր: Կարելի է անոր ձեռ-
քէն ազատիլ: **ՊԵՏՐՈՍ ԶԱՅԺԱՆ**

ԴՈՒՆ ԿԸ ԿԱՐԴԱՍ ԳԻՐՔԵՐՈՒՆ ԳԻՐՔԸ
(Շար. 209 էջէն)

Ճշմարիտը մարդկային մտքի ու արտի
բացարձակ պահանջն է: Ճշմարտու-
թիւնը հիմն է բոլոր գիտութեանց: Բը-
նութիւնը ճշմարտութեան արտայայ-
տութիւնն է: Ուսմանց մէջ ճշմար-
տութեան փնտոտութիւնն է մեր գրգիռն
և ուղեցոյցը: Կ'ուզենք հասնիլ իրա-
կանութեան: Կը մերժենք անոտի
կարծիքներ և նախապաշարումներ:
Ճշմարտին է որ բարիին և գեղեցիկին
հետ միացած արժէք կուտայ գեղար-
ուեստին: Բարոյական մարդի մէջ ալ
ճշմարտութիւնը պէտք է ըլլայ մեր
խորհարգներուն, խօսքերուն և գործե-
րուն ղեկավարը: «Ճշմարտութիւնը
ներքին մարդուն մէջ» (Սաղմ. ԾԱ. 7.)
որ է անկեղծութիւն: Եւ աշխարհ
անկեղծութեան այս դասը սորված է
գլխաւորապէս Աստուածաշունչէ:

Ամէն մարդու պարտականութիւնն է
միշտ իր խղճին ձայնին անսալ: Խիղճը
լռեցնել բարոյական կործանում յառաջ
կը բերէ: Խիղճը մեր ներքին ազդա-
րարն է, ներսէն խօսող արդարութեան
ձայնը: Հոս է մարդու վսեմութեան կնի-
քը: Այսու ամենայնիւ ցաւալի բան մըն
է որ խղճմտանքը բնական վիճակի մէջ
բոլորովին ալ անսխալ չէ: Անիկա կըր-
նայ վարժուիլ և յարմարիլ ամէն տեսակ
ուղիղ կամ մոլոր մտայնութեան: Ըն-
տանեկան բարի կամ յոռի կրթութիւ-
նը, կրօնքներ ու հաւատալիքներ, ցե-
ղային մտայնութիւններ և ընկերական
սովորոյթներ եւայլն, մեծ ազդեցութիւն
ունին խղճին կազմութեան վրայ: Խիղ-
ճը կարելի է կրթել, զարգացնել և լու-
սաւորել, կարելի է նաեւ թմրեցնել, ծը-
ռել ու խաւարեցնել: Պէտք է մեր խիղ-
ճերը կրթենք ճշմարտութեան արձա-
կած լոյսով: Բազմաթիւ դարերու
փորձը կ'ապացուցանէ որ Աստուածա-

չունչն է խղճի լաւագոյն զաստիաւարակը: Յիսուսի տուած Ոսկեղէն կանոնն է խղճերու բարձրագոյն առաջնորդը ու փորձաքարը: «Ամէն ինչ որ կ'ուզես որ մարդիկ ձեզի ընեն, դուք ալ անոնց այնպէս ըրէք»: (Մթ. է. 12:)

Սերն է բարթալան հիմնական գիծը: Բայց Սէրը, իբրեւ զգացում միայն, բնագոյնի և մարմնաւոր է, մինչեւ անգամ անասնական: Պէտք եղածը մաքուր սէր է, հոգեւոր: Մենք պէտք է սէրը նկատենք իբրեւ Կամֆի գործ, իբրեւ գիտակցօրէն յանձն առնուած զհոգութիւն, ծառայութեան ոգի, և անձնագոյնութիւն: Ամէն երիտասարդ իբրեւ մարդ՝ ազատ կամք, ընտրութիւն ունի, կ'ուզէ իր անհատականութիւնը արժեցնել, բայց անկարելի է իր ընկերային միջավայրէն պրծիլ: Ուստի պէտք է առանց իր անձնաւորութեանէն թողնելու, իր ընկերական միջավայրին հետ ալ հաշտ աւ համերաշխ ապրիլ և անոր օգտակար ծառայութիւններ մատուցանել, որով պիտի սիրուի, և իրապէս երջանիկ պիտի ըլլայ: Ասոր համար իմաստաբուն հարկ է:

Գիտութենէ բարձր բան մըն է իմաստութիւնը: Կեանքի գեղարուեստն է ան: Զայն կրնաս սորվիլ Յիսուս Քրիստոսէն որ իբաւամբ կոչուած է «Սրբութեան Գեղեցկութիւնը» (The beauty of Holiness) և Յիսուս Քրիստոս է Սբ. Դիրքի կեդրոնական Դէմքը ու իր խաչն է այդ առանցքը, որուն վրայ կը դառնայ ամբողջ յայտնութիւնը: Իմաստութիւնը կը պահանջէ յաճախ մեր փափաքներուն տահման և մեր կիրքերուն սանձ դնել, այո՛ խաչել մեր անձը:

Կատարելութեան ձգտիլ, այս է իմաստութեան յորդորը, և կատարելութիւնն է գործնական կեանքի մէջ բարիի, ճշմարիտի և գեղեցիկի միաւորութիւնը: (Փիլ. Դ. 8:) Ով երիտա-

սարդ, եթէ կ'ուզես երջանիկ ըլլալ, եթէ կ'ուզես զոհացում գտնել, կատարելութեան ձգտէ, իսկ ասոր համար անհրաժեշտ պիտի գտնես Սբ. Դիրքի սիրտողութիւնը: Մանաւանդ հետեւէ Յիսուսի հրամաններուն. «Կատարեալ եղէք, ինչպէս ձեր երկնաւոր հայրն ալ կատարեալ է»: «Եթէ կ'ուզես կատարեալ ըլլալ եկուր իմ ետեւէս» (Մատթ. Ե. 48: Ժթ. 21:)

Սբ. Դիրքը Աստուծոյ կատարեալ պահանջման արտայայտութիւնն է, մեզ քննող ու քննադատող, (Նբբ. Դ. 12 խղճի ամենակատարեալ դատարարակը: Աստուծոյ Սբ. Հոգւոյն ձեռքը գլխաւոր գործիքն է այն՝ մարգարէն միտքը լուսաւորելու, սիրտը փոխելու, հոգին նորոգելու, կամքը վերին զօրութեանց ներշնչելու: (Բ. Տիմ. Գ. 15-17)

Սբ. Մեսրոպ Սամոսատի մէջ Հռոմփանոս Հռետորի օգնութեամբ հայ գիրերը կատարեալ ձեւի մը վերածելէն անմիջապէս ետքը, ձեռնարկեց թարգմանութեան գործին՝ սկսելով Առակաց գիրքէն, որմէ ընդօրինակելով իր աշակերտները կարգաւ աւ գրել սորվելու սկսան: Շատ նշանակալից է Սրբոյն Մեսրոպայ նախ և առաջ Առակաց գիրքը ընտրելը թարգմանելու համար և կը ցուցնէ թէ նա ճշմարիտ մանկավարժ մըն էր, քանզի երիտասարդ էին իր աշակերտները և անոնց ձեռքը տրուելիք դասագիրք մը պէտք է որ այդ տարիքին բնութեան, ճաշակին և պիտոյքին յարմար ըլլար: Առակաց գիրքը այդպէս է: Ան երիտասարդներուն համար գրուած գիրք մըն է: Հոն խօսող իմաստուն անձը յաճախ բողբոսի իմ բառերով կ'սկսի իր խօսքերը: Երիտասարդ կեանքի ամէն տեսակ փորձութիւններն ալ վտանգները նկարագրուած են հոն, և անոնցմէ փախչելու և ազատելու ճամբան ալ ցուցուած է: Հարկաւ հոն կայ չափահասներու և ծե-

րերու համար ալ օգտակար խրատներ, բայց մանաւանդ երիտասարդները կեանքի մէջ յառաջդիմելու եւ յաջողելու համար այս գրքէն օգնութեան շատ կարօտ են: Այն երիտասարդը որ զԱյն իրեն մտերիմ ընկեր եւ խորհրդատու կ'ընտրէ, կրնայ ճշմարիտ յաջողութեան հասնիլ: Ուստի ամէն երիտասարդի յանձնարարել կ'ուզեմ այս գիրքը սերտել շարունակ, իր կենցաղը ու գործերը բաղդատել անոր գոհար խօսքերովը, իր համբանները բռնել անոր մէջ արտայայտուած իմաստութեան փորձաքարին զարնելով եւ վստահ եմ որ անկից օգնութիւն, զօրութիւն եւ օրհնութիւն պիտի գտնէ թէ՛ այս ժամանակաւոր կեանքի եւ թէ՛ յաւիտենականութեան համար:

Աբ. Գրքի ուսումնասիրութեան մէջ կարելի է չորս մեթոտ բռնել. —

ա) Կարգով, զլուխ առ զլուխ կարդալ ծայրէ ի ծայր: Ասի շատ օգուտներ ունի, եւ պէտք է որ մարդ գտնէ երեք կամ չորս անգամ այսպէս ամբողջ Աստուածաշունչը աչքէ անցունէ, անոր ամէն անկիւնին տեղեակ ըլլալու համար:

բ) Հոգեւոր մեծութեան եւ աղօթքի հաւատաւնայարմար կնոքներ ընտանիք կարդալ: Այս մեթոտը մանաւանդ Ե. Ք. Ընկերութեանց, Զանիցի եւ նման կազմակերպութեանց համար ընկալեալ եւ ընդհանրացած սովորութիւն մըն է, բայց ես ինքս երբեք չեմ յանձնարարեր որ երիտասարդ մը միշտ եւ միմիայն այս մեթոտով կարդայ Աբ. Գիրքը. որովհետեւ թերի եւ միակողմանի պիտի մընայ իր ծանօթութիւնը, եւ գուցէ շուտով պիտի ձանձրանայ ալ Աբ. Գիրք կարդալէ:

գ) Աբ. Գրքի գիտական ուսումնասիրութիւնը՝ մեզուր զարգացնալ հաւատ: «Ներածութիւն» ըստուած ուսումնասիր ամփոփ եւ գրութեանական ձեւն է, եւ կ'արժէ որ մեր թւսեալ երկսեռ երիտա-

սարգութիւնը ժամանակ եւ պատենութիւն ստեղծէ Աբ. Գրքի պատմութիւնը, ժամանակագրութիւնն ու հնախօսութիւնը, Ս. Գրական երկիրներու եւ յատկապէս Պաղեստինի՝ աշխարհագրութիւնը, երկրաբանութիւնը, կենդանաբանութիւնն ու բուսաբանութիւնը, հին եւ նոր կտակարաններու բնագրական քննութիւնն ու թարգմանութիւնները, եւ Աբ. Գրքի մէջ գրուած եղելութեանց արտաքին պատմութեան եւ զանազան գիտութիւններու հետ փոխ-յարաբերութիւնը հետազօտութեան նիւթ ընելու: Ես ուսանողութեանս տարիներուն փորձառութեանէս կը վկայեմ իմ երիտասարդ բարեկամներու որ ու մանաւանդ Կիրակի օրերուն պարապոյ ժամերն աւելէ աւելի օգտակար եւ հաճելի կերպով չեն կրնար գործածել:

դ) Մասնաւոր նիւթերու կամ վարդապետութեանց հաւանաս Աբ. Գրքի զննութիւնը: Այլ եւ այլ հօգեւոր նիւթերու վրայ խօսող կամ Գրիտոնէական վարդապետութիւններն ապացուցանող համարներն ու հատուածները գտնել եւ զանոնք իրարու հետ բաղդատել շատ օգտակար է՝ որոշ եւ արամբանական եղբակացութեանց յանգելու եւ հաստատ համոզումներ գոյացնելու համար: Արդէն Աբ. Գրքի ներքին նիրգաշնակութիւնը եւ զանազան մասերու համաձայնութիւնն իմանալու համար կարեւոր պայման մըն է այս համեմատական ուսումնասիրութիւնը:

Այս բոլորին հետ միասին.

1. Պէտք է աղօթել, որպէսզի Աստուած իր Աբ. Հոգիովը, որ «Ճշմարտութեան Հօգին» է, լուսաւորէ մեր միտքերը եւ օգնէ ու առաջնորդէ մեզի Աբ. Գրքի բուն հոգեւոր միտքը հասկընալու եւ հոն յայտնուած կենսաւորող ճշմարտութիւնները գտնելու:

2. Աբ. Գրքի ուսումնասիրութեան

պէտք է մօտենանք միշտ խոնարհ հոգիով և անկեղծօրէն ուսումնասիրելու որոշումով: Պէտք չէ որ անոր ամբողջութեան կամ ուէ մասին վրայով յախուռն կարծիքներ յայտնելու ելլենք, այնպէս խորհելով թէ հոն գտնուած ամէն բան կը հասկնանք: Հոն ինչպէս որ մասնակներուն անգամ հասկնալի ըլլալու չափ պարզ բաներ կան, նոյնպէս կան դժուարին և խորունկ խնդիրներ որ ամէնէն գիտուն անձերն ալ կը շաւարեցնեն: Աստուածաշունչը իր վրան ամէնէն շատ խօսուած ու գրուած գիրքն է:

3. Պէտք չէ մոռնանք որ հոն յայտնուած ճշմարտութեանց զօրութիւնն օրէ օր ապրուած փորձառական կեանքով միայն կը հասկնուի: Աստուածաշունչը ուղիղ իմանալու պայմանն է հոն արտայայտուած Աստուծային կամքին հնազանդելով, ապրիլ բարոյապէս մաքուր և հոգեւոր կեանք մը (Յովն. է. 17): Նաեւ երբեք մոռնալու չենք որ Յայտնութեան կեդրոնն է Յիսուս

Քրիստոս ինքը:

Արդեօք յաջողեցա՞յ ներկայացնել Սբ. Գիրքը իբրեւ ներշնչումի և զօրութեան աղբիւր: Կրցա՞յ արդեօք ցուցնել թէ ինչո՞ւ մեր երիտասարդները Սբ. Գիրքը կարդալու են, թէ ինչո՞ւ Սբ. Գիրքը անհրաժեշտ է մաքուր կեանք մը ապրելու համար: Եւ իմ կեանքիս համար մանկութենէս ի վեր պայն պըտած եմ միշտ անսխալ և հաւատարիմ ուղեցոյց: Քեզի ալ առկէ լաւագոյն մէկը չեմ կրնար յանձնարարել, ո՞վ երիտասարդ բարեկամս: Ընայէ՛ Սբ. Գիրքը իբր կեանքի ուղեցոյց, և ես քեզի համար պիտի աղօթեմ: Յօյս ալ ունիմ որ պիտի գայ օր մը՝ երբ դուն պիտի ըսես նոյն խօսքը զոր Սամարացիք ըսին այն կնկան որ Յակոբի ջըրհորին վերեւը Յիսուսի հետ խօսակցած էր. — «Ասկէ ետեւ ոչ թէ քու խօսքիդ համար կը հաւատանք, վասնզի մենք անձամբ լսեցինք:» (Յովն. Դ. 42):

ՋԱՆԻՅԸ ՍՈՒՐԻՈՅ ՄԷՋ

ՀԱԼԷՊ ԷՄՄԱՆՈՒԷԼ ԵԿԵԼԵՑԻ

Կը բաղկանայ երիտասարդաց, երիտասարդուհեաց ընկերակցութիւններէն և աղայոց ու աղջկանց պատանեացներէն:

— Ունին յատուկ սենեակ, հրգեհոն, գրադարան և հոգեւոր ու կրօնաբարոյական ամսաթերթ մը որ եօթը տարիներէ ի վեր կանոնաւոր կերպով կը շարունակէ:

— Բաժին ունեցած հսկելիցի շէնքին շինութեան գործին մէջ՝ 100 Օսմանեան ոսկիէ աւելի գումարով մը:

Փոքրիկ օգնութիւններ ըրած են Մամլըթէյնի թոքախտաւորներու հիւանդանոցին և Հալէպի անկեղծանոցին:

Օգնած են Պիթիասի դպրոցին և Հա-

լէպի Մէյտան թաղին նորահաստատ բողոքական դպրոցին մէջ ուսուցչուհիի մը տարեթոշակին:

— Չորս տարբեր տեղեր Վոր Աւետարեր» նուիրած են:

— Հոգեւոր և ընկերային գործունէութեան համար անցեալ տարի պատուիրակութիւն մը զրկած են Սուէտիս անոնց ձեռամբ՝ Եօզուն-Օլուքի մէջ Զանից ընկերակցութիւն մը հիմնուած է, և որուն աջակցած են գիրք և թերթ զրկելով:

— Հետաքրքրուած են արտաքին աւետարանչական գործով և նուէրներ դրկած են Զինաստան և այլ տեղեր:

— Միջանի տարիներէ ի վեր ձմեռ գիշերները գիշերային հաւաքոյթներ սար-



Ա. Համաժողով: Առջևի շարք, Ալէն ձախ. Պատ. Յ. Արգարեան, Օրբ. Մ. Գաղանձեան, Ե. Տէր Մկրտիչեան, Է. Թուխմանեան, Պատ. Ա. Հատիտեան: Ետևի շարք, Ալէն ձախ. Տիարք Տոքթ. Բ. Հատիտեան, Ճ. Կայծակեան, Խ. Կիւղէլիմեան, Բ. Գրիգորեան, Ս. Սիւլահեան, Մ. Պալիկեան, Վ. Իսկիկեան:

քած են, պատմական, գրական, գիտական եւ առողջապահական նիւթերու շուրջ:

—Նաեւ այս տարի գիշերային դպրոց մը բացած են, ուր անդամներէն ոմանք կամաւոր դասեր աւանդած են շէն աւելի երիտասարդներու:

—Հալէպի Մէյտան թաղին Աւետ. Եկեղեցիին մէջ, այս տարի հիմնեցին կիրակնօրեայ դպրոց մը եւ պատանիներու համար Զանից մը որոնց երկուքն ալ մինչեւ հիմայ կանոնաւոր կերպով շարունակեցին անդամներու գործակցութիւնը:

—Ամառները արձակուրդային Սր. Գրոց դպրոց բացած են պատիկներուն համար:

—Աշխատած են իրենց անդամները հետաքրքրել առեւտրային գործով որով իր անդամներէն վեց հոգի իրենք զիրենք յանձնած են Տէրոջ Գործին:

—Այս վերջերս հոգեւոր շարժում մը սկսած է իրենց մէջ: Աղօթենք իրենց համար:

ՀԱԼԷՊ ԲԵՊԷԼ ԵԿԵՂԵՑԻՆ

Ունի երիտասարդաց եւ երիտասարդուհեաց ընկերակցութիւններ, տղոց եւ աղջկանց պատանեացներ, եւ մանկանց բաժիններ:

—Նիւթական աջակցութիւն ըրած են եկեղեցւոյն:

—Մանկան մը դպրոցին տարեթոշակը վճարած են:

—Եկեղեցւոյ ապագայ շէնքին համար ջանք կը թափեն:

—Նոր Աւետարներ մը նուիրած են եկեղեցիի մը:

—Արարներու մէջէն եկած երիտասարդի մը օգնած են նիւթապէս եւ անոր կրօնական եւ ընկերական խնդիրներուն մէջ

առաջնորդած և օգնած են :

— Գրեթէ ամէն տարի ունեցած են գիշերային դպրոց :

— Երբեմն այցելած են անկեղանոցը և նիւթական օգնութիւններ ալ ըրած են :

— Ուսուցիչներ տուած են Կ. Դպրոցին :

— Օգնած են մի քանի տարի առաջ Գըրզխանի մէջ կազմուած Ջանից ընկերակցութեան :

— Օգնած են մանկանց համար բացուող արձակուրդային Սբ. Գրոց դպրոցին :

— Անդամներէն երկու հոգի նուիրուած են Տէրոջ գործին :

— Երիտասարդաց բաժինը վերջերս թուլցած է : Պէտք է աղօթենք անոնց համար :

ՀԱԼԷՊ ՆԱՀԱՍՍԱԿԱՅ ԵԿԵՂԵՑԻ

— Կազմութեան շրջանին մէջ է տակաւին :

— Ժողովները երկսեռ են ուր 30—40 հոգի ներկայ կ'ըլլան : Ունին նաեւ երկսեռ պատանեաց մը :

— Նուէրներ ըրած են իրենց նորակազմ եկեղեցիին և մասնաւոր ճիգ կը թափեն եկեղեցիին շէնքին համար :

— Երգիչ խումբ մը կազմեցին եկեղեցիին համար :

— Անդամներէն վեց հոգի կ'աշխատին կիրականօրեայ դպրոցին մէջ :

— Նոր կազմուելու վրայ եղող այս ընկերակցութիւնը կարօտ է ձեր աղօթքներուն :

ՀԱԼԷՊԻ ՏԵՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԻԻՆ

Կազմուեցաւ 1926ին :

— Պատրաստած է Ծրագիր—Կանոնագիր մը Սուրբ ընկերակցութիւններուն համար, որ՝ վերջէն Սուրբ Ջանիցներու համաժողովին մէջ ինչ ինչ փոփոխութիւններու ենթարկուելով վերստին տպագրուեցաւ վերջերս :

— Հոռ գտնուող Ջանիցները իրարմէ

տեղեակ պահած է :

— Կազմակերպած է 1929ին մասնաւոր ժողով մը ուր խօսած են Երուսաղեմի ընդհանուր միսիոնարական համաժողովէն վերադարձող Պրազիլիացի Սրժան-թինցի և Ջինացի պատուիրակներ :

— Կազմակերպած է 1931ին Հալէպի մէջ տեղի ունեցող յորելինական հանգէսը :

— Անդամակցած է Համաշխարհային Միութեան :

— Կազմակերպած է երկրորդ համաժողով մը Հալէպի մէջ :

— Նուէրներ զրկած է Թիւրքիոյ մէջ միսիոնարական գործի համար :

— Կազմակերպած է ընդհանուր պաշտամունքներ Հալէպի բոլոր Ջանիցներու համար :

ՊԵՅՐՈՒԹ Ա. ԵԿԵՂԵՑԻ

— Կազմուած է 1927ին :

— Ներկայիս ունի Երիտասարդաց, Երիտասարդուհիներու ընկերակցութիւններ, երկսեռ պատանեաց, և երկսեռ կրտսերաց բաժին մը :

— Տուած են նիւթական օգնութիւն իրենց եկեղեցւոյն :

— Կանոնաւորապէս օգնած են Մամըլթէյնի հիւանդանոցին չորս տարիներէ ի վեր :

— Դրամական օգնութիւն ըրած են իրենց Մանկապարտէզին :

— Վերջերս որոշած են որդեգրել աղքատ աշակերտ մը՝ հոգաւով անոր բոլոր ծախսը մանկապարտէզէն սկսեալ մինչեւ երկրորդական վարժարան մը աւարտելը :

— Ունին գրագարան մը որով օգտակար կը հանգիստանան իրենց համայնքին :

— Սարքած են վիճաբանական հաւաքածոյներ ժողովուրդին համար :

— Հետաքրքրուած են որբերով, և երբեմն ճաշի հրաւիրած են վանոնք :

ՊԵՅՐՈՒԹ, Բ. ԵԿԵՂԵՑԻ

Ունի երիտասարդաց, և երիտասարդուհիներու զատ ընկերակցութիւններ և պատանեացի բաժին:

Ունեցած են զգալի հոգեւոր գործունէութիւն եկեղեցւոյն մէջ:

Կանոնաւորապէս օգնած են Մամբրէթէյնի թոքախտանոցին:

ՊԵՅՐՈՒԹ, ՏԵՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

—Տեղւոյն Զանիցները իրարմէ տեղեակ պահած է:

—Հսկած է ընկերութիւններու գործաւնէութիւններու վրայ:

—Կարգադրած է Սուրբոյ Զանիցներու առաջին համաժողովը:

—Կարգադրած է ընդհանուր պաշտամունքներ:

ԵՅՐՈՒՆ-ՕԼՈՒԳ, ԵԿԵՂԵՑԻ

—Կազմուեցաւ 1931 Սեպտեմբերին:

—Իրենց կանոնաւոր կիրականօրեայ ժողովները կ'ունենան:

—Այս նորակազմ Զանիցը իր եկեղեցիին կ'օգնէ տարբեր օւղղութեամբ:

—Թղթակցութիւններ ունեցած է Հալէպի Էմմանուէլ եկեղեցւոյ Զանիցին հետ:

—Այս նորակազմ Զանիցը, որ իր եկեղեցիին օրհնութիւն մը կրնայ ըլլալ, ձեր ազօթքներուն կը կարօտի:

ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԻՈՅ

ՋԱՆԻՑՆԵՐՈՒՆ ՄԻՋԵԻ

Սուրբոյ տարբեր կողմերը, տարբեր եկեղեցիներու մէջ գոյութիւն ունեցող Զանից Ընկերակցութիւններու միջեւ գործակցութեան մը պէտքը չատոնց զգալի էր. բայց այս մասին առաջին գործնական քայլը Պէյրութի Տեղական Միութիւնը առաւ, հրաւիրելով միւս քայլ ընկերակցութիւնները համաժողովի մը ի Պէյրութ: Հալէպի և Գահիրէի Զանիցները սիրով ընդունելէն հրաւերը

և և Ս. համաժողովը կազմուեցաւ 1930

Ապրիլ 23ին տասներկու անդամներով որոնց 4ը Հալէպէն, մէկը Գահիրէէն և եօթը Պէյրութէն: Ատենապետ ընտրուեցաւ Պատ. Յ. Արզարեան և ատենադպիր՝ Օր. Մ. Գազանճեան: Ժողովը միայն հինգ կարճ նիստեր կրցաւ ունենալ, քովհետեւ անդամներէն ոմանք նաեւ անդամ էին եկեղեցիներու Միութեան որ իր նիստերը կունենար նոյն օրերուն: Տեղեկագրութիւններ եղան տարբեր ընկերակցութիւններու կողմէ, խորհրդակցութիւն կատարուեցաւ գործակցութեան շուրջ և այս մասին ծրագիր մը պատրաստուեալ ձեռնարկուեցաւ:

Սուրբոյ համար ընդհանուր քատուղարի մը պէտքը անհրաժեշտ տեսնուելով այս մասին զիմուժ կատարուեցաւ եկեղեցիներու Միութեան, և թահայն այս դիմումը անմիջական արդիւնք մը չտալով՝ մէկ տարուան համար Պատ. Յ. Արզարեան ընտրուեցաւ այս պաշտօնին:

Հալէպի մէջ պատրաստուած Ծրագիր—Կանոնագրի սրբագրութեան ձեռնարկուեցաւ:

Զանք եղաւ մեր հովիւները հետաքրքրելու արպէսզի ամէն եկեղեցւոյ մէջ Զանից մը կազմուի:

Տեղի ունեցան ընդհանուր պաշտամունքներ:

Բ. Հաւածողով

Ժողովը գումարուեցաւ Հալէպ, 1931 Ապրիլին, մասնակցութեամբ 29 պատգամաւորներու որոնցմէ եօթը Պէյրութէն, մէկը Գահիրէէն, մէկը Տամասկոսէն և մնացածը Հալէպէն: Հալէպի Արարախօս եկեղեցւոյն Զանիցն ալ մասնակցեցաւ այս համաժողովին և ժողովները տեղի ունեցան իրենց շէնքին մէջ: Ա. պետ ընտրուեցաւ Տրար Խ. Կիւզէլիմեան և ատենադպրուհի Օր. Ե. Տէր-Մկրտիչեան: Ժողովը ունիւցաւ



Առջևէն Ա. շարք Աջէն ձախ,—Տիկ. Ե. Բէթէնճեան, Օր. Կ. Կիւլիւզեան, Տիկ. Ա. Փոլատեան, Օր. Մ. Խաղաճեան, Օր. Ե. Տէր Մկրտիչեան, Օր. Ս. Փոլատեան, Բ. շարք Աջէն ձախ,—Օր. Վ. Տէր Պօղոսեան, Տիարք Ա. Հաննէ, Ա. Պատաքեան, Խ. Կիւզէլիմեան, Ե. Թովմասեան, Թ. Պալեօղեան, Պատ. Ա. Հատիտեան, պատ. Յ Արգարեան, Տիարք. Թ. Մարլեան, Ճ. Գոշումեան, Հ. Բարսեղեան, Օր. Ա. Տէր պօղոսեան, Գ. շարք Աջէն ձախ,—Օր. Ռ. Շամլեան, Տիարք. Ա. Աւագեան, Տորթ. Բ. Հատիտեան, Կարապետ Կիրակոս, Ե. Տէր Մկրտիչեան, Մ. Շնորհօքեան, Մ. Անարլեան, Մ. Պալիկեան, Օր. Ճ. Հասրճեան:

հինգ նիւտ և հետեւեալ նիւթերու շուրջ կարգացուցան մասնաւորապէս պատ- քատուած ուսումնասիրութիւններ. և տեղի ունեցան խորհրդածութիւններ:

(ա) Գործակցութեան պէտքը և միջոցները:

(բ) Ե. Բ. Ջ. ի գործունէութիւնը գը- րականութեամբ:

(գ) Ընկերակցութեան ոգին մեր մէջ

(դ) Երիտասարդը եկեղեցիէն ներս:

(ե) Երիտասարդը եկեղեցիէն դուրս:

(զ) Հոգեւոր Արթնութեան մը պէտ- քը մեր մէջ:

(է) Ծրագիր կանոնագրի Սրբազրու- րիւնը կատարուեցաւ: Համաժողովը յանգեցաւ հետեւեալ որոշումներուն:

(ա) Ընդհ. քարտուղարի համար նո- րէն դիմում ընել եկեղեցիներու Միու- թեան աւելի շեշտելով պէտքին ստիպո- ղականութիւնը և մինչև անոր յաջողիլը ընդհանուր գործերը վարել գործադիր մարմնի մը միջոցաւ, որ հոն ընտրուե- ցաւ:

(բ) Նոր Աւետարների խմբագրութե- նէն խնդրել որ թերթին երկու էջը յատ- կացնէ, երիտասարդներու մասնաւոր Զանիցի և այս էջին համար ընտրուե- ցաւ մասնաւոր յանձնախումբ մը:

(գ) Որոշուեցաւ ունենալ մեզի յա- տուկ քայլերգ մը և այս մասին գրել Տիկ. Վեր. Բասունիին:

(դ) Որոշուեցաւ Զանիցի յատուկ

գիրքերու շրջիկ գրադարան մը ունե-
նալ Հալէպի մէջ որմէ կարենան օգ-
տուիլ Սուրիոյ բոլոր Զանիցները :

ԶԱՆԻՑԸ ԳԱՀԻՐԷԻ ՄԷՁ

Գահիրէի Երիտ. Գրիտ. Զանից
Ընկ.ը ծնունդ առաւ 1927 Դեկ. 25ին,
Վեր. Հ. Յ. Համբարձումեանի նախա-
ձեռնութեամբը : Անգամազրուեցան 7
գործօն և 2 օժանդակ անդամներ : 1928
Ապրիլ 1ին եկեղեցիին Օրիորդաց Մի-
ութիւնն ալ միանալով՝ եղաւ երկսեռ
ընկ. մը, և կոչուեցաւ «Հայ երկսեռ
Երիտասարդաց Գրիտ. Զանից Ընկե-
րակցութիւն» :

Ընկերակցութիւնս անդամ եղաւ եր-
կու Զանից ընկերակցութեանց միութե-
թիւններուն, — 1929ին Գահիրէի, և
1930ին Սիւրիոյ և Լիբանանի :

Ընկ.եան կարեւոր գործերէն մին
եղած է «Ամենօրեայ Առաջնորդ» անուն
գրքոյկին 1931 տարուանին թարգմա-
նութիւնը և հրատարակութիւնը : Թէև
կը ծրագրուէր շարունակել այս գործը
տարիէ տարի, բայց կարելի չեղաւ :

Կիրակնօրեայ կանոնաւոր աղօթա-
ժողովներէն զատ, յաճախ ունեցաւ երե-
կոյթներ, գրական և երաժշտական հան-
դէսներ, լուսնի լուսով բուրգերու այ-
ցելութեան, դաշտային հանդէսներ ու
պաշտամունք, եւայլն :

Վերջերս, Ապրիլ 23ին, Ամերիկեան
Համալսարանի սրահին մէջ, սարգեց

նուագահանդէս մը, բոլորանդէր ա-
ռաջնորդութեամբ Բրոֆ. Ս. Կ. Խաչա-
տուրեանի, և սիրայօժար մասնակցու-
թեամբ Ընկերակցութեան անդամներու
և համակիր բարեկամներու : 25 հոգի է
բաղկացած երգչախումբը երգեց չորս
երգեր և կտորներ, մէկը ըլլալով Հան-
տելի Հալէլուիա գործը : Տասը հոգի է
բաղկացած նուագախումբը, նուագեց
երկու կտորներ օնդուեցան մեներգներ,
և նուագուեցան ջութակի և դաշնակի
վրայ սօլօներ : Ներկայ էին շուրջ
350 հոգի :

Ընկ.ը այժմ ունի 24 անդամներ—13
գործօն, 6 օժանդակ և 5 համակիր :

Խ. Յ. ԿԻԻՋԷԼԻՄԵԱՆ

ՍԵԼԱՆԻԿԻ ԵԿԵՂԵՑԻ

—Կազմուած է երկու տարի առաջ
Պատ. Ֆարահեանի նախաձեռնութեամբ :

—Ունին ժողովրդային գրողարան մը :

—Հետաքրքրուած են աղքատներով
և այլևայլ առիթներով օգնած են ա-
նոնց :

Ծնունդի գիշերները տունները այցե-
լելով երգած՝ և Ծնունդի քաղցր աւե-
տիսը առած են անոնց :

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԶԱՆԻՑԻ ԿԵԱՆՔԷՆ

Ներկայիս Աշխարհի վրայ կան 80,113
Ընկերակցութիւններ աւելի քան 4.5
միլիոն անդամներով :

Միացեալ Նահանգներու մէջ պայքա-
րած է Ալբրիի դէմ և գինարգելութիւնը
յաջողցնող գլխաւոր ոյժը եղած է —ստեղ-
ծած և քաջալերած է «Լաւ Բաղաքացի-
ութեան շարժումը—ոյժ տուած է աւե-
տարանչական գործունէութիւններուն,
ստեղծած է «Լուռ Ժամու Ընկերներ»
շարժումը որուն արձանագրուողներ ո-
րոշ ժամանակ կուտան մասնաւոր նիւ-
թերու շուրջ աղօթելու : Համաշխար-
հային խաղաղութեան կը ձգտին :

Կը հասկնանք որ, Տամասկոս, Պէյթիյաս
և ձորապլուս ևս Զանիցներ կազմուած են
սակայն կը ցաւինք որ չի կրցանք իրենց
գործունէութիւններուն մասին ուէ տեղե-
կութիւն քաղել և հոս ներկայացնել : Պէտք
կ'ըզանք նաև յիշել որ վերոգրեալ Զանիցի
լուրերը կրնան աւելի ճոխ ըլլալ և ճշգրիտ
թիւեր պարունակել եթէ ամէն ընկերութիւն
բարեհաճէր ժամանակին և ճշգրտութեամբ մեր
հարցումներուն պատասխանել :

Ներոպայի տարբեր եկեղեցիներուն մէջ օգնած է Սբ. Գրքի տարածման, ոյժ տուած է միախոնարական գործունէութիւններու:

Ասիոյ տարբեր երկիրներու մէջ—Գոբէա, Զինաստան, Հնդկաստան ևն—ուսնեցած է Աւետարանչական մեծ գործունէութիւն, կազմակերպած է եկեղեցիներ և պատրաստած է քարոզիչներ և հովիւներ:

Ափրիկէի մէջ միջեղային խտրութիւնները վերցնելու մեծ ճիգ թափած է:

Միջոց մը եղած է Երտարբեր յարանաւանութիւնները և ազդութիւնները կողք կողքի միմեան, եղբայրանան և Բրիտանիոյ դատին համար գործակցին:

(Երիտ. Կոչ Երիտ. շար 203րդ էջին)

չեւ անգամ ոչ Աշխարհի Փրկչին կամքին և զօրութեան: Դրամը առաջին և միակ բանը չէ: Երիտասարդութիւնը արդէն պատրաստ է: Բրիտանիոյ ալ բարեյոթար է օգնելու: Աշխարհի Բրիտանոնէացեւ մը կ'սպասէ մեզի: Կ'սպասէ մեր իրարու հանդէպ ունեցած սիրոյ բարձրագոյն և հզօրագոյն զգացումին գործնականապէս արտայայտութեան, այն սէրը՝ որով Աստուած իր Միածինը

աշխարհ զրկեց, Գողգոթայի խաչափայտին վրայ բարձրացուց և փառաւորեց յարութեան առաւել: Մենք բաժանեալ չենք այլ միասնաբար կը կազմենք Համաշխարհային Զանաթրաց Ընկերակցութիւնը: Ահա հոս նուիրենք մենք զմեզ Համագործակից ծառայութեան և միացեալ Միսիօնարական Գործունէութեանց իտէալը իրականացնելու համար:

Արդիւնքը: Զանից Ընկերակցութիւնը՝ հզօր կերպով պիտի կանգնի: Մենք պիտի զօրանանք հաւատքով և սկզբունքով: Մենք աւելի պիտի մօտենանք մեր կոչումի բարձրագոյն նշանակէտին: Ապագան միշտ անհասանելի է և մենք ապագայ մ'ունինք: Այս Համաշխարհային Համաժողովը պատմութիւն մը չէ այլ մարգարէութիւն մը:

Մեր խաչակրութեան բարձրագոյն նպատակն է Աշխարհի Բրիտանոնէացեւ մը: Բոլոր բաներու մէջ նոր ծնունդի կը կարօտինք: Նոր խորհողներ և նոր արտադրութիւններ, նոր ստեղծագործներ և նոր ստեղծագործութիւն մը, Բարենորոգիչներ և բարենորոգուած աշխարհ մը: Այս է աւետարանին պատուէրը: Այս է Աստուծոյ ծրագիրը դարերու համար: Թրգմ. Ն. Ս. ԹՈՎՄԱՍԵԱՆ

ՆԱՀԱՏԱԿԱՅ ՀԱՅ ԺՈՂ. ԵԿԵՂԵՑԻԻ ԿԵԱՆՔԷՆ

Մայիս 19ին, եկեղեցիիս Աւետարանչական մասնախումբին կարգադրութեամբ աւետարանչական ժողով մը կատարուեցաւ մասնախումբիս ատենապետ Մր. Ա. Բարըլիճնի նախագահութեամբ: Խօսեցաւ Հ. Հ. Րիկո՝ «Միւրիոյ մէջ մեր Աւետարանչական պատեհութիւնները» նիւթին շուրջ:

Յուշիս ամսաւան մէջ եղաւ երեք

հաւաքոյթներ: Առաջինը Յուշիս 5ին եկեղեցիիս պաշտօնական կազմակերպութեան և նուիրագործման արարողութիւն էր, երկրորդը՝ Յուշիս 15ին մշակութային, և երրորդը՝ Յուշիս 21ին ընկերային էր:

Սուրիոյ և Լիբանանի հայ Աւետարանական վերջին տարեկան ժողովին մէջ եկեղեցիի միութեան անդամ ըն-

դունուած էր, և որոշուած էր անոր պաշտօնական կազմակերպութեան եւ նուիրագործման արարողութեան կատարումը յանձնել Հալէպի Շրջանին Վարչութեան: Վերջինը իր կողմէ ընտրուած հինգ անդամներէ, Վերք. Կ. Յարութիւնեան, Նախագահ, Ս. Ս. Մանուկեան, Ա. Շիրաճեան, Ս. Աղպապեան, Կ. Քէթէնճեանէ, բաղկացեալ յանձնախումբով կատարեց արարողութիւնս Նիզիպլեան Թանգարանի բակը: Շատ լաւ պատրաստուած բնօրին վրայ տեղ դրաւ Էրն յանձնախումբին անդամները (բացի Վեր. Քէթէնճեանէ իր անհանգստութեանը պատճառաւ,) Մր. Ա. Բարլթըն, արաբախօս Երիցական եկեղեցիի հովիւը Ա. Գալմի, Պատ. Յ. Զաքմագճեան և Պատ. Ա. Հատիտեան: Երեք եկեղեցիներէ մօտ 500 հոգիներ ներկայ էին: Եղանակէ մը, երգէ մը և Վեր. Կ. Յարութիւնեանի աղօթքէն ետքը Պատ. Ա. Հատիտեան Ս. Գիրքէն յարմար կտորներ կարդաց: Երգէ մը ետքը Վեր. Ա. Շիրաճեան Միութեան որոշումը եւ նամակը կարդաց: Ապա եկեղեցիի հովիւը կարդաց Վեր. Զ. Զ. Բիկսի եկեղեցիի հոգաբարձութեան ռզղեալ շնորհաւորումի և մաղթանքի գեղեցիկ նամակը: Ապա նորակազմ եկեղեցիի այր և կին անդամները իրենց հովիւին հետ միաբերան կարդացին ի-

րենց ուխտը: Վեր. Շիրաճեան ութը նոր այր և կին անդամներու ընդունելութեան արարողութիւնը կատարեց: Ասոր յաջորդեց նախագահին, Վեր. Յարութիւնեանի, կողմէ նուիրման ջերմեռանդ աղօթքը, որ մթնոլորտը հոգեւոր շունչով մը օժեց, և շատերուն յիշել տուաւ Սողոմոնի աղօթքը տաճարի նուիրման առթիւ:

Նախագահը յայտարարելէ ետքը թէ Հալէպի մէջ Նահատակաց Հայ Ժող. Եկեղեցին պաշտօնապէս կազմակերպուած և Միութեան անդամ ճանչցուած է, երգչախումբը երգեց «Եկեղեցիին հիմնեալ է լսկ Բրիտոսի վրայ» երգը: Վեր. Ս. Մանուկեան տաճկերէն լեզուով կարդաց բարեգալուստի ուղերձը, (զոր կը յուսանք յաջորդով հրատարակել): Երգէ մը ետքը Վեր. Ս. Աղպապեան խօսեցաւ սիրալիր փոխյարաբերութեան վրայ, եւ ասոր յաջորդեց Ս. Հաղորդութիւնը, զոր կատարեցին Վեր. Կ. Յարութիւնեան եւ Մր. Բարլթըն: Երգչախումբին մէկ երգէն ետքը Վեր. Ապտիւլ Քէրիմ Գալմիի օրհնութեամբը աւարտեցաւ այս յիշատակելի պաշտամունքը:

Յուլիս երեքին շատ ուրախալի էր տեսնել ժողովուրդէս 17 մանուկներու մկրտութիւնը Վեր. Կ. Յ. Յարութիւնեանի կողմէ: ԹՂԹԱԿԻԾ

ԴՊՐՈՅԱԿԱՆ ՀԱՆԴԵՄՆԵՐԸ

Յունիսի երրորդ շաբթուն մէջ կատարուեցան Մանչերու և Աղջկանց Ամերիկեան Բարձրագոյն վարժարաններու տարեկիրճի հանդէսները: Իւրաքանչիւր դպրաց ունեցաւ երկու քական հանդէս: Աղջկանց Վարժարանի առաջին հանդէսը նախագահութեամբ Միւ Սի-

լիմէնի, կատարուեցաւ աւարտող կարգի կողմէ, զոր կը կազմէին.— Սիրոյն Ահարոնեան, Լուլու (Մարգարիտ) Յարութիւնեան, Անժէլ Գալֆաեան, Սրբուհի Կամպարեան, Կիւլենիա Գունտազճեան, Ռեքեկա Մինակոսեան, Լիտիա Փոլատեան, Ռոզա Սուլպեան, Է-

լիզ Սուրողլուեան, Անիձա Եագուպ-
եան, Ասոնցմէ իւրաքանչիւրը հան-
դէսին մասնակցեցաւ Հայերէն, Ֆրան-
սերէն, Անգլիերէն լեզուներով արտա-
սանութեամբ, կամ ինքնատիպ գրա-
թեամբ մը: Օր. Լ. Կ. Յարութիւն-
եան, դուստրը Վեր. Կ. Յարութիւնե-
անի, Անգլիերէն լիզուով կարդաց հրա-
ժեշտը, Անգլիախօսի հնչումով և շեշ-
տերով, որ բոլորին ուշադրութիւնը
գրաւեց: Աւարտող կարգը յաջողու-
թեամբ երգեց մի քանի գեղեցիկ կտոր-
ներ Տիկ. Ազնիւ Կարախանեանի ա-
ռաջնորդութեամբ, եղան նաև նուագ-
ներ դաշնակի, ջութակի և սրինգի վրայ
Տիկ. Կարախանեանի եւ ընկերներուն
կողմէ, և առանձնաբար դաշնակի վրայ
Օր. Լ. Յարութիւնեանի կողմէ: Յու-
նիս 17, կէտօրէ կտքը եղաւ վարժարանիս
վկայաբաշխումի հանդէսը: Երիցա-
գոյն կարգէ աւարտող 10 յիշեալ օրի-
որդներէն զատ, Սոփոմոր կարգը (որ
նախկին Այնթապի Սէմինէրի վերջին
կարգն է) աւարտող 12 օրիորդներ ալ
վկայականներ ստացան: Այս առթիւ
Վեր. Ե. Քասեանի կարգաց շատ գեղե-
ցիկ և այժմէական կրթական ճառ մը,
զոր կը յուսանք մեր յաջորդ մէկ թիւին
մէջ հրատարակել: Դպրոցին երգչա-
խումբը երգեց երեք գեղեցիկ կտորներ:

Դպրոցիս նախկին ուսումնաւար-
տուհեաց միութիւնը իր բարի սովորու-
թեան համեմատ ունեցաւ իր տարեկան
հաւաքոյթը, նախագահութեամբ Տիկ.
Կ. Արեւեանի: Ուսումնաւարտուհիներ-
էն զատ հրաւիրուած էին շարք մը բա-
րեկամներ, ինչպէս նաեւ Ատանայի,
Հաճընի, Խարբերդի, Մարաշի, Ատա-
փաղարի, (որ հիմա Պոլիս փոխադրուած
է) եւ Պէյրութի Ամերիկեան աղջկանց
դպրոցներուն ուսումնաւարտուհիները:
Այնթապի Սէմինէրի ուսումնաւար-
տուհիները շնորհաւորելի են իրենց այս
լայնամիտ եւ իմաստուն քայլին հա-

մար. որով կը ջանային բոլորը համա-
խըմբել գրեթէ բոլորին միակ ներկա-
յացուցիչը եղող ներկայ Հալէպի Աղջ-
կանց Բ. Վարժարանին շուրջը: Հաւա-
քոյթին նպատակն էր իրենց Ալմա Մա-
դէրին համար խորհրդակցութիւններ
ընել, տեղեկութիւններ տալ եւ աւորի
նպատակ որոշումներ ընել: Ուրախու-
թեամբ տեղեկացանք թէ Ուսումնաւար-
տուհեաց Միութիւնը 1922 ին Հալէպ
վերակազմուած է, և մինչեւ հիմա գո-
յացուցած է անդամատուրքի միջոցաւ
կոկիկ հիմնադրամ մը, միեւնոյն ատեն
հոգալով աշակերտուհիի մը տարիթո-
շակը: Տիկին Ե. Սարգիսեան, Ու-
սումնաւարտուհեաց Միութեան անդամ-
ներէն մին, իր ամուսինն հեաղէպի
Ամերիկա ուղեւորութեան առթիւ,
մասնաւոր ջանքեր կ'ընէ Ամերիկա-
րեակող ուսումնաւարտուհիներու հե-
տաքրքրութիւնը արթնցնել իրենց Ալ-
մամաթըրին հանդէպ և անոնց նիւթա-
կան օգնութիւնը տպահովել, գործ մը
որուն մէջ շատ լաւ կը յաջողի: Ազնիւ
տիկնոջ այս բերանացի տեղեկութիւնը
շատ գոհ թողուց ներկաները:

Մանչեսթը Բարձրագոյն Վարժարա-
նին նախապատրաստական բաժնին կող-
մէ Յունիս 17ին, Էմմանուէլ եկեղեցիի
վարի սրահը, կատարուեցաւ արտասա-
նութեանց մրցումը չորս լիզուներով
և մասնակցութեամբ 12 ուսանողներու:
Կը նախագահէր Մր. Ա. Քարլթըն, օ-
րուն մասին հոս փակագիծի մէջ ըսենք
որ իր համեստ, փափկանկատ հոգիով, իր
ուշիմութեամբն ու ժրութեամբը օրինի
եղած է բոլորին և արժանի կիրպով
փոխանորդած է դպրոցիս նախագահ
Տր. Ճ. Մէրիլի օր արձակուրդով Ամե-
րիկա կը գտնուի այժմ: Արտասանու-
թեան մէջ շահեցան, — Լեւոն Պապիկ-
եան՝ արարերէն, Թորոս Լոյսաճեան՝
Փրանսերէն, Յովհաննէս Խաչիսեան՝
հայերէն, Յովսէփ Մինասեան՝ անգլիե-

րէն: Օտար լեզուներու մէջ, մասնաւորապէս ֆրանսերէնի և ապա անգլիերէնի մէջ, աշակերտներու զարգացումը աւելագրաւ էր: Ներկայ գտնուող Թրանսպիներ մեծապէս գոհ մնացած էին ֆրանսերէն արտասանութիւնէն, ըսելով թէ առաջին անգամ ըլլալով ֆրանսերէն կը լսէին հոս: Պէտք է յիշել հոս Բաֆֆի Տիքիճեանն ալ որ նաև շատ յաջողութեամբ արտասանեց իր ֆրանսերէն կտորը: Դպրոցին երգիչ խումբը՝ առաջնորդութեամբ Թաթ Ս. Կանիմանի երգեց երկու հայերէն և մէկ անգլիերէն հրգեր:

Յունիս 20ին կատարուեցաւ դպրոցիս երկրորդ հանդէսը Էմմանուէլ եկեղեցիի սրահը:

Ուսանողական նուագախումբը եւ երգչախումբը զեղեցիկ կատարներ նուագեց և երգ մը երգեց: Արտասանութեան մրցումի մէջ շահող չորս ուսանողներ կրկնեցին իրենց արտասանութիւնները: Այս բաժնորէն ետքը Մր. Ա. Քարլթըն կատարեց նուէրներու և վկայականներու բաշխումը: Նախ նուէրները. — Աշխատանոցային գործի համար Կենտանաբանական դասի մէջ՝ Օգոստին Յովնանեան և Թորոս Շանլեան, բուսաբանական դասի մէջ՝ Ալեքսանդր Մաթոսեան եւ Փօլ Հասրճեան, բոյսերու հաւաքածոյ պատրաստելու մէջ՝ Յարութիւն Փոլատեան և Պէրնարտ Դալֆաեան նուէրներ ստացան: Այլոնեան Մրցանակը, հինգ օսմ. ոսկի, որ կը տրուի մէկ տարուան զէպքերու և զէմքերու մասին լաւագոյն գրութիւնը գրողին, ստացան Եգուարդ Դարամանուկեան եւ Օգոստին Յովնանեան: Բաշկեան մրցանակը, որ հայերէնի մէջ առաջնութիւն շահողին ըլլալու, ստացաւ Խաչատուր Դուրթուճեան: Հինգերորդ կարգի ֆրանսերէնի լաւագոյն գործի նուէրը տրուեցաւ Յակոբ Քէօթեանի: Պատուով յիշուեցան հե-

տեւեալները իրենց դասարանին մէջ առաջինը հանգրիսացած ըլլալուն համար: Ա. դասարան՝ Երուանդ Լոշխանեան, Բ. դասարան՝ Յակոբ Սաղիրեան, Գ. դասարան՝ Դաւիթ Պէլար (մայրը հայ հայրը բողոքական Հրեայ), Դ. դասարան՝ Կարապետ Տէմիրճեան, Ե. դասարան՝ Յակոբ Քէօթեան, Յարէշմէն՝ Ալեքսանդր Մաթոսեան (անցեալ տարի ալ իր կարգին առաջինն էր), Սոֆոմոր՝ Թորոս Շանլեան: Դպրոցին մարզական զէսին մէջ շահողները մետալներ ստացան. — Յարութիւն Փոլատեան՝ 200 մէթր վազդի մէջ, զոր կատարեց 25 եւ 2/5 երկվայրկեանի մէջ: Սամուէլ Մանուէլեան՝ 400, (26 եւ 2/5 երկվայրկեան), 800 (2 վայրկեան և 12 2/5 երկվայրկեան), 1200 (4 վայրկեան եւ 46 երկվայրկեան): Նկարագրի, դասերու եւ մարզանքի մէջ դպրոցիս որոշ չափանիշին հասնող ուսանողներու արծաթեայ զարդասեղ կը տրուի: Այս տարուան շահողներն են՝ Ե. Այնլեան (Գ. կարգ), Խ. Խաչատուրեան (Գ.), Ե. Նազաչեան (Գ.) և Յ. Սաղիրեան (Բ):

Դպրոցիս երեք բաժիններէն երկուքը, Կրտսերաց եւ Նախապատրաստական, աւարտողներուն կը տրուի վկայական (diploma): Կրտսերաց բաժնէն 10 եւ Նախապատրաստականէն 7 աշակերտներ տիպլոմ ստացան, իսկ Ներսէս Բասմաճեան (Նախապատրաստականէն) սէրթիֆիքա ստացաւ: Հաստատութեան գլխէն բաժնին՝ 4 կարգերէն միայն երկուքը ունենալուն համար վերջին կարգը (Սոֆոմոր) աւարտողներուն Գլխէն տիպլոմ չի տրուիր այլ սէրթիֆիքա մը կը տրուի: Այս տարուան ընթացաւարտներն են. — Մանուէլ Անսըրլեան, Սուրէն Պապիկեան, Սարգիս Պալապանեան, Յարութիւն Պալիովեան, Լեւոն Չափարեան, Սարգիս Կիւլէսէրեան, Իմաստուն Կիւլվանէսեան, Գրիգոր Հասրճեան, Օգոստին

Յովնանեան, Գրիգոր Ճըլճըլեան, Խաչեր Գալուստեան, Եղուարդ Գարամանուկեան, Կարապետ Բեհրաւեան, Վահրամ Գալլէտէրեան, Բիւզանդ Գալֆահան, Ասատուր Մազուլեան, Սամուէլ Մանուշակեան, Հապիպ Բարսեղեան, Հայկ Փռլատեան, Հրանտ Սէրայտարեան, Թորոս Շանլեան, Տիգրան Թիւֆէնքճեան, Սամուէլ Վարժապետեան: Մասնաւոր դասընթացքի հետեւող երկու աշակերտներ եւս, Մարտիրոս Պարսիկեան և Սարգիս Գոչեան, սէրթիֆիքաւորն:

ԳԱՀԻՐԻԷՆ ստացած նամակէ մը կը քաղենք հետեւեալը,

— Գահիրէի Հայ Աւետ. եկեղեցւոյ հովիւ Վեր. Հ. Յ. Համբարձումեանի ընդ Օր. Նուարդ Սիւլահեանի աւանդութիւնը տեղի ունեցաւ Յունիս 15ին Պսակը կատարեց Վեր. Էջիսըն: Ներկայ էր երեք հարիւրի մօտ բազմութիւն մը, բաղկա-

ցած եկեղեցիին ժողովուրդէն, և Ամերիկեան, Անգղիական եւ ուրիշ օտար միութեան անդամներէ և բարեկամներէ: Վեր. Հ. Յ. Համբարձումեան ազնիւ խորխուրդը եւ նեցած էր հարսանիքի շաքարին տրուելիք դրամը յատկացնել Մամըլթէյնի թոքախտաւորներու Ապաքինարանին, և այդպէս ալ ըրած էր:

Վեր. Ա. ՇԻՐԱՃԵԱՆԻ որդին Տոքթ. Էլիազարի և տեղիս Ամերիկեան Աղջկանց Բարձրագոյն Վարժարանի վարժուհիներէն Օր. Եսթեր Տէր Մկրտիչեանի աւանդութիւնը տեղի ունեցաւ Յունիս 15ին Էմմանուէլ եկեղեցիի սրահը, ներկայութեամբ 500է աւելի ազգականներու և բարեկամներու: Պարագային յարմար կարճ խրատականներ ըրին Վեր. Ս. Աղապապեան, Ս. Մանուկեան. Վեր. Բասուլիի մէկ գրութիւնը կարդացուեցաւ: Պսակը կատարեց Վեր. Ա. Շիրաճեան:

ԿԸ ՓՆՏՈՒՈՒԻ

Միս Ֆրիբսընի որբանոցէն, որ Շիմլան կը գտնուի, երկու որբեր Վիգորիա և Վահրամ Գամպէրեան 1927 Գաւառաւորացած էին: Իրենց հայրը կը կոչուի Խաչատուր, արհեստով պղնձագործ է և բնիկ Վէզիր քէօյի: Եղբայրները կը կոչուին Փարաւոն և Երեմիա:

Որբերը կ'ուզեն հասկնալ թէ իրենց այս պարագաներէն որքան ողջ են և ուր են: Կը խնդրուի իմացնել Տիար Արամ Նուրխանեանի, Shemlan, Via Aley, Liban.

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

Շնորհակալութեամբ ստացանք հետեւեալ նուէրները:

1. Պէյրութ Ա. Հայ Աւետ. եկեղեցիէ 800 զրուշ սուրիական:

2. Պէյրութ, Էջրէֆիյէի Հայ Աւետ. եկեղեցիէ 528 զրշ. սուրիական:

3. Հալէպ, Նահատակաց Հայ Ժող. եկեղեցիէ 150 զրշ. սուրիական:

4. Հալէպ, Բեթէլ Հայ Աւետ. եկեղեցիի Աղջկանց Ջանից Ընկերակցութենէն 85 զրշ. սուրիական:

صاحب الانتياز والمدير المسئول القس ق. هاروتونيان

NOR AVEDAPER B. P. 287, ALEP, SYRIE